AZG NEW PDF.qxd 18/03/2010 23:47 Page 1

Ազգ
Azg
19 ՄԱՐՏ 2010 ՈՒՐԲԱԹ 48 (4429)
ISSN: 1829-1651

# Ադրբեջանական կողմը գնդակոծել է Կոթիի ուղղությամբ

«Ազգը» տեղեկացրել էր, որ Տավուշի մարզի Կոթի գյուղի մերձակայքում (Նոյեմբերյանի շրջան) ՀՀ զինուժի կողմից հայտնաբերվել եւ չեզոքացվել է ադրբեջանական «դիվերսիոն-անասնագողական» խումբ, որի անդամներից մի քանիսը սպանվել են, եւ որոնց անունները բացահայտված են: Դրանից հետո որոշ ադրբեջանական լրատվամիջոցներ լուրեր էին տարածել, թե հայկական կողմը մարտի 17-ին Կոթիի շրջանից գնդակոծել է ադրբեջանական դիրքերը, սակայն ՀՀ պաշտպանության նախարարությունը հերքել է այդ լուրերը: «Մարտի 17-ին ադրբեջանական կողմն է գնդակոծություն սկսել Կոթի գյուղի շրջանում գյուղատնտեսական աշխատանքներ կատարող տրակտորի ուղղությամբ: Տուժածներ եւ վիրավորներ չկան», ասված է ՀՀ ՊՆ հայտարարության մեջ:

# Կատարվեց ռուսական եկեղեցու հիմնարկեքը

## *Կիրիլ պատրիարքը Փաշազադեի անունից Գարեգին Բ-ին հրավիրեց Բաքու*

Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլի Հայաստան այցելության վերջին օրը սկսվեց ռուս ուղղափառ եկեղեցու հիմնարկեքի արարողությամբ: Եկեղեցին կառուցվում է Իսակովի պողոտայում՝ Երեւանյան լճի ափին: Արդեն կառուցված է ներքնահարկը, որը լինելու է հոգեւոր հովվի գրասենյակը: Իսակովի պողոտայում կառուցվող Սուրբ Խաչ եկեղեցին, ըստ մակետի, տպավորիչ տեսք է ունենալու եւ մայրաքաղաք մտնողներին հիշեցնելու է հայ-ռուս բարեկամության մասին:

Արարողությունից հետո Կիրիլ պատրիարքն ասաց, որ սա նշանակալի իրադարձություն է, որին շատ են սպասել: Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդը մաղթեց, որ եկեղեցին ուղղափառների նոր աղոթատուն լինելուց զատ դառնա նաեւ մեր երկու եկեղեցիների եւ ժողովուրդների բարեկամության եւ համագործակցության եւս մեկ հանգրվան:




*Բարերար Արա Աբրահամյանը բացատրություններ է տալիս կառուցվող եկեղեցու մասին:*

«Հայոց եւ Ռուսիո սրբազան հողի վրա բարձրացող նվիրական մեր տաճարները խորհրդանշում են նաեւ մեր երկու ժողովուրդների եղբայրական գործակցության ոգով հաստատված դարավոր բարեկամությունը եւ գալիս են նոր ընթացք եւ զարգացում բերելու մեր եկեղեցիների համագործակցությանը», իր օրհնությունը փոխանցեց Ամենայն հայոց կաթողիկոսը:

Հիմնակերքի արարողությանը ներկա էին Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, եկեղեցու բարերար, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը: Այնուհետեւ ռուս պատրիարքն այցելեց Երեւանի պետական համալսարան, որտեղ տեղի ունեցավ պատրիարքի «Հովվի խոսքը» եւ «Ազատություն եւ պատասխանատվություն» գրքերի հայերեն թարգմանությունների շնորհանդեսը: Համալսարանում Կիրիլ պատրիարքին շնորհվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում: ԵՊՀ-ում կայացած հանդիպման ժամանակ Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդն իր եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ, Կովկասի մահմեդականների վարչության ղեկավար Ալլահշուքյուր Փաշազադեի անունից Ամենայն հայոց կաթողիկոսին հրավիրեց մասնակցելու ապրիլին Բաքվում կայանալիք ԱՊՀ երկրների միջկրոնական գագաթաժողովին:

«Ինձ հետ հայրապետին Բաքու մեկնելու հրավեր եմ բերել, որպեսզի արտահայտեմ իմ կարծիքն այլ կարեւոր հարցերում, որոնք կքննարկվեն այնտեղ: Ես կարծում եմ, որ մեր բաց լինելը, որը որեւէ ընդհանրություն չունի թուլության, ազգային ինքնագիտակցության եւ կրոնական ինքնության կորստի հետ, ընդունակ է շատ բան փոխելու այս աշխարհում, որպեսզի աշխարհը տեսնի քրիստոնեական եկեղեցու դեմքը», ասաց պատրիարքը:

Վերջերս **«Ազգ»** օրաթերթն անդրադարձել էր Ալլահշուքյուր Փաշազադեյի հայտարարությանը, թե շատ կցանկանար, որ Գարեգին Բ-ն այցելեր Բաքու՝ հավելելով, որ եթե Հայ առաքելական եկեղեցու առաջնորդն ընդունի հրավերը, ապա այդ քայլում արտասովոր եւ տարօրինակ ոչինչ չկա:

Հ. Հ.

ՍԱԿԱՐԱՆ

# Դրամն արժեզրկվում է՝ ինչո՞ւ եւ որքա՞ն

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Երեկ մարտի 18-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում կայացել է 20 մլն 800 հազար դոլարի առուվաճառք՝ 405 դրամ մեկ դոլարի դիմաց միջին կշռված փոխարժեքով: Վերջին օրերին տեղի ունեցած գործարքների ցուցանիշներից այս ցուցանիշը տարբերվում է ոչ միայն դրամի շարունակվող արժեզրկմամբ, այլեւ կատարված առուվաճառքի ծավալների կտրուկ մեծացմամբ: Ինչը վկայում է շուկայում դոլարի պահանջարկի մեծացման, իսկ ավելի մեծ հաշվով՝ տնտեսության դոլարայնացման մակարդակի շարունակվող բարձրացման մասին: Բնական է, որ նման տատանումների ժամանակ բնակչությանը նախեւառաջ հետաքրքրում է, թե ի՞նչն է պատճառը եւ որքա՞ն է շարունակվելու այդ երեւույթը: Հարցեր, որոնց միանշանակ պատասխանելը գրեթե անհնար է: Առավել եւս խիստ անշնորհակալ գործ է կանխատեսումներ անելը փոխարժեքի հետագա պահվածքի վերաբերյալ, քանզի, ինչպես բազմիցս ենք նշել, այն կախված է բազմաթիվ գործոններից՝ ներքին եւ արտաքին: Չհավակնելով վերջնական եզրակացություններով հանդես գալուն, փորձենք նախ պարզաբանել, թե ինչո՞վ է պայմանավորված դրամի այս արժեզրկումը:**

**Պատճառներից հիմնականը, թերեւս, անցյալ տարվա ընթացքում մեր տնտեսական անկումն է, դրանից բխող բոլոր հետեւանքներով՝ արտահանման նվազում, մասնավոր փոխանցումների կրճատում եւ այլն: Դրա հետեւանքով երկիր մտնող արտարժույթի ծավալները նվազել են, ինչը չի կարող չթանկացնել արտարժույթը (մասնավորապես դոլարը) երկրի ներսում՝ համապատասխանաբար թուլացնելով ազգային արժույթը՝ դրամը:**

*Տես էջ 3*

# Ստեղծվեց Արմենական-ՌԱԿ «Հայկաշեն Ուզունյան» ակումբ

Չորեքշաբթի օրը՝ մարտի 17-ին, Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցության գաղափարախոսությանը համակիր մի խումբ բնակիչներ հավաքվել էին հանդիպելու Հանրապետական վարչության անդամների հետ: Հանդիպմանը կուսակցության գաղափարախոսության եւ նրա պատմության մասին խոսեցին փոխատենապետ **Արմեն Մանվելյանը,** վարչության անդամներ Գայանե Մուրադյանը, Սիրո Գեւորգյանը եւ Սուրեն Սարգսյանը: Հանդիպմանը ներկա էր նաեւ Ռամկավար Ազատական կուսակցության Ֆրանսիայի ակտիվի եւ ՌԱԿ Համաշխարհային խորհրդի գործադիր մարմնի անդամ Վարուժան Սիրափյանը: Վերջինս իր ելույթում ներկայացրեց կուսակցության անցած ուղին, խոսեց նրա պատմության եւ Հայաստան-Սփյուռք ակտիվ համագործակցության անհրաժեշտության մասին: Արմենական-ՌԱԿ-ի համակիր անդամները, որոնցից շատերը նախկինում արդեն եղել են կուսակցության շարքերում, որոշեցին համախմբվել եւ ստեղծել, Ռամկավար Ազատական կուսակցության մեծ երախտավոր Հայկաշեն Ուզունյանի անունը կրող ակումբ: Սուրեն Սարգսյանի գլխավորությամբ կատարված ուխտի արարողությունից հետո հայտարարվեց նոր ակումբի ստեղծման մասին, նորընտիր վարչության ատենապետ ընտրվեց Մարիամ Խաչատրյանը:

# «Մենք չենք ուզում լինել Թալեաթի, Էնվերի եւ մյուսների թոռները»

**Այս մասին հայտարարել են թուրք մի խումբ երիտասարդներ, որոնք Ստամբուլում իրենց դժգոհությունն են հայտնել վարչապետի Էրդողանի հայտնի հայտարարությունների կապակցությամբ: Երիտասարդները ելել են բողոքի ակցիայի պաստառներով, որոնց վրա պատկերված է եղել Թալեաթ փաշան՝ Էրդողանի գլխով: Երիտասարդ թուրքերի անունից հայտարարությամբ է հանդես եկել Չերեն Քենարը. «95 տարի է, ինչ մեզանում գործում է նույն պետական ռեֆլեքսը, այնինչ Թալեաթից մինչեւ Էրդողան որքա՞ն վարչապետներ են անցել: Վարչապետի լոնդոնյան հայտարարությունները՝ հայերին երկրից հանելու վերաբերյալ, դեմ են միջազգային իրավունքին եւ մարդկային խղճին», հայտարարել է Քենարը: Դիմելով թուրքական քաղաքական վերնախավին՝ Քենարն ասել է. «Թալեաթ, Էնվեր փաշաների դատապաշտպաննե՞րն եք դարձել: Մենք չենք ուզում լինել նրանց թոռները, մենք ուզում ենք լինել այն թուրքերի թոռները, որոնք պատսպարեցին որոշ հայերի եւ պաշտպանեցին նրանց կոտորածներից»:**

Հ. Ա.

# Էրդողանի սպառնալիքն անհարիր է ԵՄ անդամակցության ձգտումներին

**Էրդողանի՝ 100 հազարավոր հայերի արտաքսման վերաբերյալ բարձրաձայն հնչեցրած սպառնալիքը ավելորդ է, բորբոքում է մեծացող հակամարտությունը եւ անհամատեղելի է այս երկրի՝ ԵՄ անդամակցության ձգտումներին, քննադատել է Եվրոպայի խորհրդարանում կանաչների խմբակցության արտաքին քաղաքական խոսնակ ավստրիացի Ուլրիկե Լունաչեկը՝ շարունակելով, թե նման սպառնալիքը սահմանը բացելու թուրք-հայկական արձանագրության ոգուց չի բխում: ԱՄՆ-ի եւ ուրիշ երկրների խորհրդարանների ցեղասպանության բանաձեւերին Թուրքիայի վարչապետի արձագանքին անդրադառնալով Ուլրիկե Լունաչեկը նկատել է տվել, թե վարչապետ Էրդողանը ավելի շուտ պարտավոր է շարունակել առաջ տանել իր երկրում հայերի ցեղասպանության վերաբերյալ «երկչոտ, անվճռական սկզբնական նշանները»:**

**Իսկ Ավստրիայի խորհրդարանում Ազատական կուսակցությունը ներկայացնող դոկ. Յոհաննես Հյուբները կոչ է արել իր գործընկերներին առավել ակտիվ լինել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում՝ հղում անելով Շվեդիայի խորհրդարանի օրերս ընդունած բանաձեւը, ինչպես նաեւ Թուրքիայի դեսպանի Օսլոյից հետկանչը:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# «252-րդ բանաձեւը չի կարող արգելափակվել»

## *Հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարի օգնականը*

Մարտի 4-ին եւ մարտի 11-ին, համապատասխանաբար, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի եւ Շվեդիայի պառլամենտի կողմից ճանաչվեց Հայոց ցեղասպանությունը: Անկարան անմիջապես, հետ կանչելով իր դեսպաններին Վաշինգտոնից եւ Ստոկհոլմից, պահանջեց բացատրություններ ինչպես ԱՄՆ-ից, այնպես էլ՝ Շվեդիայից: Եվ եթե Շվեդիան վարչապետի մակարդակով ներկայացրեց այդ բացատրությունները, ասելով, թե «մեկ ձայնի առավելությամբ ընդունված անհիմն որոշումը չի կարող խոչընդոտել թուրք-շվեդական հարաբերություններին», որի համար, ի դեպ, այդ երկրի վարչապետը կկանգնի Գերագույն դատարանի առջեւ՝ «շվեդ ժողովրդի կամքը արհամարհելու մեղադրանքով», ապա ամերիկյան կողմից այդ «ներողությունները» այնքան էլ նկատելի չեն: Իսկ սա զարմանալի չէ, Միացյալ Նահանգներն այն երկիրն է, որ չի ընդունել եւ չի ընդունի, երբ իր հետ խոսում են ճնշումների, շանտաժների լեզվով: Որպես այս ամենի շարունակություն, ԱՄՆ պետքարտուղարի օգնական **Ֆիլիպ Գորդոնը**, թերեւս պատասխանելով Թուրքիայի վարչապետի «արդար ցանկությանը», որ Անկարան սպասում է «շվեդական ներողության» նաեւ ամերիկյան մատուցումը, հայտարարել է. «Հայոց ցեղասպանության բանաձեւը չի կարող արգելափակվել: Չի կարելի միանշանակ պնդել, որ հայկական բանաձեւի հետագա ճանապարհը Կոնգրեսում կկասեցվի. Կոնգրեսն անկախ մարմին է եւ կանի այն, ինչ որոշել է»: Ահա այսպես է բացատրություններ տալիս ԱՄՆ-ը բոլոր ցանկացողներին: Գորդոնը, արդեն անդրադառնալով հայ-թուրքական արձանագրություններին, նշել է, որ գործընթացը փակուղի չի մտել: ԱՄՆ պետքարտուղարի օգնականը եւս մեկ անգամ շեշտել է, որ Վաշինգտոնի համար շատ կարեւոր է հասնել հայ-թուրքական հաշտեցմանը:

Ֆիլիպ Գորդոնը խոսել է նաեւ «երկրորդական բաներից», մասնավորապես նա կոչ է արել Թուրքիային՝ ճնշում գործադրել Իրանի վրա՝ հրաժարվելու միջուկային ծրագրերից: Գորդոնը քննադատել է Անկարային, որ վերջինս չի սատարում Իրանի միջուկային ծրագրերն արգելող ՄԱԳԱՏԷ-ի բանաձեւը. «Երբ ամբողջ աշխարհը հանդես է գալիս Իրանի միջուկային ծրագրերի դեմ, Թուրքիայից հրարամերժ հայտարարություններ են հնչում», հայտարարել է Գորդոնը: Հատկանշական է, որ Վաշինգտոնից էլ արդեն նկատում են Անկարայի հրարամերժ հայտարարությունները: Թուրքիան մեկ հանդես է գալիս որպես միջնորդ Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ, մեկ էլ վարչապետ Էրդողանն է հայտարարում. «Այդ ինչո՞ւ Իսրայելը պետք է ունենա միջուկային զենք, իսկ Իրանը՝ ոչ»: Ահա այսպիսի միջնորդությամբ է զբաղված Թուրքիան, իսկ Վաշինգտոնը, մանավանդ Իրանի մեկ այլ թշնամի Իսրայելը չեն կարող ներել Թուրքիային, երկերեսության համար: Նրանց ձեռքում բավական լուրջ «զենքեր» կան հասկացնելու Անկարային այդ մասին, եւ դրանցից մեկը, անշուշտ, հայկական բանաձեւն է:

Հ. ԱՓՅԱՆ

# Հրանուշ Հակոբյանն ու Արա Աբրահամյանը կնքեցին համագործակցության համաձայնագիր



«**Ազգը**» իր ընթերցողներին արդեն տեղեկացրել էր ՀՀ սփյուռքի նախարարության եւ Ռուսաստանի հայերի միության հետ կնքվելիք համագործակցության համաձայնագրի ու դրա շրջանակներում ընդգրկված ծրագրերի մասին:

Երեկ ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** ընդունեց Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ **Արա Աբրահամյանին**, ինչպես նաեւ նախագահի 1-ին տեղակալ **Գեորգի Տեր-Ղազարյանցին**, փոխնախագահներ **Արամ Սարգսյանին, Վլադիմիր Աղայանին**, ԱԺ պատգամավոր **Սերգեյ Աբրահամյանին**, սփյուռքի նախարարին առընթեր ասյանի անդամ **Հակոբ Ավետիքյանին**: Նախարարը ներկաներին մանրամասն ներկայացրեց համագործակցության համաձայնագրի կետերը եւ դրանցում ընդգրկված միջոցառումների համատեղ ծրագրերը ու բարձր գնահատեց Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ կազմակերպվող ձեռնարկները:

**Արա Աբրահամյանը**, բարձր գնահատելով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ստեղծված Սփյուռքի նախարարության գաղափարը, որն արդեն կարեւոր գործունեություն է իրականացնում աշխարհասփյուռ հայերին աջակցելու ու շատ հարցեր լուծելու խնդրում, ասաց. «Այս նախարարության ստեղծումով մեր աշխատանքները հեշտացել են: Մենք արդեն ունենք տուն, մի օջախ, որտեղ մեզ հուզող հարցերի պարզաբանումները, համագործակցությունները առանց ավելորդության ու քաշքշուկի լուծվում եւ իրականանում են: Շնորհակալ ենք ու բարձր ենք գնահատում մեր կազմակերպության հանդեպ ցուցաբերած ձեր ուշադրության համար եւ հպարտ ենք, որ սփյուռքի նախարարությունը այսպես արագ կազմավորվեց եւ արագ իր տեղը գտավ, որի ապացույցն այս համագործակցության համաձայնագրի կնքումն է»:

Այնուհետեւ Հրանուշ Հակոբյանը եւ Արա Աբրահամյանն իրենց ստորագրություններով կյանք տվեցին համաձայնագրին եւ շամպայնի լիքը բաժակներով շնորհավորեցին միմյանց: Պրն Աբրահամյանը նախարարին հանձնեց գեղեցիկ հուշանվերներ, որոնք իրենց հատուկ տեղը գտան նախարարության հուշանվերների ցուցադարակում: Տկն Հակոբյանը շնորհավորեց պրն Աբրահամյանին շատ կարեւոր մեկ այլ ձեռնարկի, երեկ Երեւանում Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Առաջինի ձեռամբ օրհնված «Սուրբ եւ Կենարար Աստծո խաչի ռուս Ուղղափառ եկեղեցու» հիմնարկեքի առիթով ու նշեց, որ այդ եկեղեցին կառուցվում է Արա Աբրահամյանի հովանավորությամբ: Պրն Աբրահամյանը շատ կարեւոր ու պատմական իրադարձություն համարեց այդ եկեղեցու կառուցումը եւ նշեց. «ՌԴ-ում 2,5 միլիոն հայություն է ապրում եւ մենք կառուցում ենք 100-ից ավել Հայ Առաքելական եկեղեցի այդ երկրում: Ռուսաստանի իշխանությունները մեզ տրամադրում են հողատարածք, ընդառաջում են, հատուկ հարկային դաշտ են ստեղծում, որ հայկական եկեղեցիներ կառուցենք: Այսօր Ռուս ուղղափառ եկեղեցու հիմնարկեքով Հայաստանի Հանրապետությունը, հայ ժողովուրդը մեկ անգամ եւս ցեցտեցին, որ հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությունը եկկողմանի է ոչ միայն քաղաքականության ու պաշտպանության մեջ, այլեւ բարոյական, հոգեկան հավատքի շուրջը: Դա մեր դարավոր բարեկամության հիմքն է: Ես հպարտ եմ ու երջանիկ, որ ինձ բախտ է վիճակվել կառուցելու այդ եկեղեցին»:



Ի դեպ, պրն Աբրահամյանը ՌԴ-ի տարածքում կառուցված ու կառուցվող շատ եկեղեցիների շինարարությանը իր ներդրումն ունի եւ այստեղ է, որ ժողովուրդը իր զավակին ասում է- «վարձքդ կատար»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Ամեն ինչ երիտասարդության եւ երիտասարդների համար»

***Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը ՀՀ սփյուռքի նախարարության հետ համագործակցության համաձայնագրի կնքումից հետո պատասխանելով «Ազգի» հարցին, ասաց.***

- Այս պատմական օրը, հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության շարունակությունն է ընդգծվում: Մենք՝ երկու ժողովուրդներս, արդեն 9-րդ դարից ինտեգրվել ենք: Այս համագործակցության համաձայնագրի կարեւորությունն այն է, որ Ռուսաստանում ապրում է մեր ամենամեծ հայկական համայնքը: Երկրորդ՝ այն շատ կարեւոր է ինտեգրումը զարգացնելու համար՝ բարձրացնել ու ներկայացնել հայկական մշակույթը եւ այն խորաթափանցորեն ներկայացնել բոլոր ազգերին: Որովհետեւ մենք դաստիարակված ենք ռուսական մշակույթով, Ռուսաստանում ենք ստանում կրթություն, աշխատում, եւ ունենք մեր՝ ռուսական մշակույթը, սովորույթները եւ այդ ամեն ինչը բերելով Հայաստան, մենք կզարգացնենք, կհզորացնենք եղածը: Բացի դրանից, կապը, ուղիղ երկխոսությունը, որ մենք ունենք, դա հավատք է, դա հույս է, դա ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական մշակույթ է: Մի խոսքով, ամեն ինչ է եւ նման հանդիպումները, Հայերի համաշխարհային կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության կողմից կազմված ու իրականացվող ծրագրերը հաստատ Հայաստանում բազմաթիվ ու բազմաբնույթ են:

**- Պրն Աբրահամյան, ձեր ծրագրերում մեծ տեղ ու դեր ունեն երիտասարդների հետ տարվող ծրագրերը, դրանք շարունակական լինելո՞ւ են:**

«Մենք շատ ենք կարեւորում երիտասարդության դերը, հենց երիտասարդության վրա ենք մենք սեւեռել մեր ծրագրերը: Երիտասարդությունը գերհզոր ուժ է: Ամեն ինչ երիտասարդության համար- սա է մեր կարգախոսը եւ հենց այդ կարգախոսով էլ առաջնորդվելով, իրականացնում ենք հենց այդ ուղղորդված ծրագրերը՝ նրանց մասնակցությամբ: Երիտասարդություն, երիտասարդություն եւ կրկին երիտասարդություն, ու ամեն ինչ երիտասարդության համար: Եթե հիշում եք, Մեծ հայրենականի տարիներին մի կարգախոս կար. «Ամեն ինչ ռազմաճակատի համար», իսկ հիմա մեր կարգախոսը հստակ է. «Ամեն ինչ երիտասարդության համար»: Երիտասարդները մշտապես պետք է լինեն մեր ուշադրության կենտրոնում, այլ ոչ թե մեկ անգամ նրանց ընդգրկելով ծրագրերում համարենք գործն ավարտված: Ո՛չ, իհարկե ո՛չ, մենք հետեւողական ենք լինելու յուրաքանչյուրի նկատմամբ եւ ամեն կերպ աջակցելու ենք նրանց թե՛ կրթական, թե՛ սոցիալական եւ թե՛ ընտանեկան զարգացմանը: Սրանք խոսքեր չեն, այլ հստակ գործող ծրագրեր, որոնց ականատեսը կարող են լինել, հետեւելով մեր գործունեությանը», նշեց Արա Աբրահամյանը եւ շատ ծեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպման, որի ընթացքում մեր երկրի ղեկավարին էր ներկայացնելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կազմակերպվող 1.500.000 ծառ տնկելու ծրագիրը, հատուկ հիշատակի պուրակի եւ ծառուղու հիմնման հնգամյա ծրագիրը, որը կմեկնարկի ապրիլի 23-ին՝ Ցեղասպանության 95-րդ տարելիցի նախօրեին եւ կավարտվի 2015-ին՝ 100-ամյա տարելիցի օրը:

Մ. Մ.



# Հայաստանն ու Ռուսաստանը համաշխարհային նոր մարտահրավերներին կդիմակայեն միասին

Շարունակվում է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակության այցը Ռուսաստանի Դաշնություն:

**Արթուր Բաղդասարյանն ու Նիկոլայ Պատրուշեւը** Հայաստանի եւ Ռուսաստանի անվտանգության խորհուրդների միջեւ համագործակցության մասին պայմանագիր են ստորագրել, որից հետո լրագրողների հետ ճեպազրույցում բարձր են գնահատել այցի արդյունքները:

Նիկոլայ Պատրուշեւը նշել է, որ իր պաշտոնակցի հերթական այցի ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Ռուսաստանի երկկողմ եւ բազմակողմ համագործակցությանը վերաբերող հարցեր, մշակվել է միասնական դիրքորոշում, քանի որ աշխարհը դինամիկ փոխվում է, առաջանում են նոր մարտահրավերներ, եւ անհրաժեշտ է արձագանքել դրանց:

«Վստահ եմ՝ նոր մարտահրավերների պատճառով առաջացող խնդիրները կլուծենք միասին», ասել է Նիկոլայ Պատրուշեւը: Նրա գնահատմամբ՝ Արթուր Բաղդասարյանը կարեւոր հանդիպումներ է ունեցել ռուս բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որպեսզի անվտանգության ոլորտում հայ-ռուսական համագործակցության օրակարգում առկա բոլոր խնդիրները համակարգված լուծվեն:

Արթուր Բաղդասարյանը հավելել է, որ ռուս գործընկերների հետ շատ արդյունավետ կոնսուլտացիաներ են եղել: Կողմերը, որպես ռազմավարական գործընկերներ, կարողացել են առկա բոլոր խնդիրների լուծումները գտնել:

«Մենք շարունակելու ենք խորացնել համագործակցությունը կոնկրետ ուղղություններով: Կձեւավորվեն աշխատանքային խմբեր, որոնք կոնկրետ ուղղություններով կնպաստեն ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացմանը: Մենք շատ գոհ ենք այս այցից, ձեռք բերված պայմանավորվածություններից եւ ընդունելությունից», ասել է Արթուր Բաղդասարյանը:

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

# Իրաքահայերը դժվարանում են հարմարվել հայրենի Արարատում



**Արարատի մարզի Դարբնիկ գյուղում են ապրում իրաքյան պատերազմի հետեւանքով վերջերս Հայաստան տեղափոխված 26 իրաքահայ ընտանիքներ: Միավորված ազգերի հայաստանյան գրասենյակը գյուղի նախկին գյուղատնտեսական քոլեջը վերանորոգել է եւ նրանց համար պատրաստել 46 բնակարաններ: «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի փետրվարի 13-ի համարում լրագրող Սիրանուշ Գեւորգյանը գրում է անցյալ տարվանից այնտեղ հաստատված Մարգարյանների ընտանիքի մասին: Նրանք այլեւս պատերազմից եւ ահաբեկչական գործողություններից հեռու են եւ ազատ շունչ կարող են քաշել, սակայն ամեն ինչ չէ, որ նպաստում է նրանց մերվելու հայաստանաբնակ իրենց հայրենակիցների հետ:**

**Բաղդադում բարգավաճ կյանք վարած ընտանիքը հայտնվել է անբարենպաստ պայմաններ ունեցող մի գյուղում, որտեղ ճանապարհները ասֆալտած չեն, աղբը մարդիկ թափում են ճանապարհի երկայնքին, հասարակական տրանսպորտն էլ անկանոն է աշխատում: «Փրկեք երեխաներին» հասարակական կազմակերպության «մշակութային ադապտացիայի» ծրագրի գլխավոր համակարգող Գոհար Գալստյանի համաձայն, բացի վերոնշյալներից, ընդհանրապես իրաքահայերն ունեն նաեւ լեզվական եւ աշխատանքային դժվարություններ: Նրանց մեծ մասը ոսկերիչներ են կամ ավտոմեխանիկներ եւ գյուղական վայրում չեն կարողանում համապատասխան աշխատանքով վաստակել իրենց ապրուստը:**

**Դարբնիկը, որն ընդամենը 8 կմ է Երեւանից հեռու, շատ է կտրված մայրաքաղաքից: Ունի մոտ 1,130 բնակիչ, որի 90 տոկոսը փախստականներ են:**

**Ընդհանուր առմամբ մոտ 1000 իրաքահայ քաղաքացիներ են ապաստան գտել Հայաստանում 2003 թվից ի վեր: Դրանցից մոտ 200-ը տեղափոխվել է ԱՄՆ: Մարգարյանները ամբողջ գերդաստանով էին տեղափոխվել Հայաստան՝ ամուսիններ, երկու որդիներ (Արամն ու Ազատը), հարսներ, դուստրեր եւ թոռներ, ընտանիքի հայրը, չդիմանալով պայմաններին, տեղափոխվելուց ընդամենը 20 օր հետո մահացել է:**

**Եղբայրները մի կերպ Երեւանում ավտոտեխսպասարկման արհեստանոց են բացել եւ աշխատում են, բայց ուրիշ շատ իրաքահայերի նման հայրենիքում վերջնականապես հաստատվելու որոշում դեռ չեն կարողանում ընդունել:**

Հ. Ծ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայաստանի նախագահը ապրիլի 12-13-ին կմեկնի ԱՄՆ

## *Էրդողանի հայտարարությունը՝ Սումգայիթի, Բաքվի ջարդերին նախորդածների նման*

«Սլովակիան մտադիր չէ միջամտել ղարաբաղյան կարգավորման հարցին», Օդային հաղորդակցությունների համաձայնագրի եւ Եվրոպական ինստեգրացիայի բնագավառում համագործակցության հուշագրի ստորագրումից հետո երեկ Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանի** հետ համատեղ ասուլիսում հայտարարեց մարտի 17-19 պաշտոնական այցով Երեւանում գտնվող Սլովակիայի արտաքին գործերի նախարար **Միրոսլավ Լայչակը**:




Սլովակ նախարարի խոսքով, ԵՄ-ն մեծ ուշադրությամբ է հետեւում ղարաբաղյան խնդրին, իսկ Սլովակիան իր աջակցությունն է հայտնում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին եւ գործընթացին՝ մադրիդյան սկզբունքների հիման վրա: «Մենք մտադիր չենք որեւէ այլ կերպ միջամտել այդ գործընթացին, քանի որ կարծում ենք, որ գործընթացն ունի իր չափանիշերը, կան Մինսկի խմբի համանախագահները, եւ մենք աջակցելու ենք հենց այդ կառույցներին, որոնք արդեն ստեղծված են», ասաց Լայչակը:

Լրագրողների հարցերին ի պատասխան՝ Հայաստանի ԱԳ նախարարը անդրադարձավ մադրիդյան սկզբունքների նորացված տարբերակի առնչությամբ հայկական կողմի առաջարկությունների, ընդհանրապես, փաստաթղթի ընդունման խնդրին: Ըստ այդմ, Նալբանդյանը նշեց, որ երկար ժամանակ ադրբեջանական կողմն էր հրաժարվում բանակցություններ վարել մադրիդյան սկզբունքների հիման վրա, եւ նույնիսկ քննարկումներ սկսելուց հետո էլ Ադրբեջանը չէր հայտարարում այդ սկզբունքները որպես բանակցային հիմք ընդունելու մասին: «Եթե Ադրբեջանը հիմա դրանք ընդունում է որպես բանակցությունների հիմք, դա միայն ողջունել կարելի է»:

Սակայն, ըստ Նալբանդյանի, ադրբեջանական վերջին հայտարարություններից ստացվում է, որ ավելի շատ բացառություններ կան մադրիդյան նորացված փաստաթղթի առնչությամբ, քան համաձայնություն: Ընդունելիքն էլ, Նալբանդյանի մեկնաբանությամբ, Ադրբեջանն ընկալում է աղավաղված:

Ինչ վերաբերում է Թուրքիայի վարչապետի՝ հայերին արտաքսելու մասին հայտարարությանը, ապա այս առնչությամբ Նալբանդյանը նախ նշեց, որ այդօրինակ հայտարարության առումով զարմանք է արտահայտվում հենց Թուրքիայում: Իսկ որ այդպիսի հայտարարություններ էլի են պատահել, նորություն չէ:

«Այդօրինակ հայտարարություններով են սկսվել Հայոց ցեղասպանության հետ կապված՝ մինչեւ 1915 թ. իրադարձությունները», ասաց նախարարը, ավելացնելով, որ այդպիսի հայտարարություններ արվել են նաեւ Ադրբեջանում՝ Սումգայիթում կամ Բաքվում, այլ բնակավայրերում հայերի ջարդերից առաջ: Նալբանդյանի ներկայացմամբ, «Դա անթույլատրելի հայտարարություն է, որ աներկբա վնասում է հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացին, բայց եւ ցույց է տալիս, որ Թուրքիան այդպիսի հայտարարություններով, չէի ասի, թե պատրաստ է առաջ գնալ»:

Հայաստանը, Նալբանդյանի խոսքերով, պատրաստ է շարունակելու հայ-թուրքական գործընթացը: Այդ համատեքստում Հայաստանի նախագահի՝ ԱՄՆ կատարելիք այցի առնչությամբ էլ նախարար Նալբանդյանը նշեց, որ Սերժ Սարգսյանը միջուկային թեմայով գագաթաժողովին մասնակցելու համար ԱՄՆ-ում կլինի ապրիլի 12-13-ին, իսկ թե ինչ արդյունք դա կտա՝ հնարավոր կլինի խոսել այցից հետո:

Ա. Հ.

# Դրամն արժեզրկվում է՝ ինչո՞ւ եւ որքա՞ն

*1-ին էջից*

**Հիշեցնենք, որ դրամի շատ ավելի կտրուկ արժեզրկում տեղի ունեցավ անցյալ տարվա մարտի 3-ին: Սակայն այն ժամանակվա կտրուկ արժեզրկումը պայմանավորված էր ԿԲ կողմից մինչ այդ իրականացվող դրամի փոխարժեքի զսպման քաղաքականությամբ, որին հաջորդեց վերադարձը «լողացող փոխարժեքին», ինչի արդյունքում փոխարժեքը վերադարձավ իր բնական շուկայական հունին: Թեեւ երկու դեպքում էլ հիմնական պատճառը ճգնաժամն էր, բայց այս անգամ ԿԲ-ն չէր զսպել փոխարժեքը եւ այն, թերեւս, շատ ավելի «լողացող» էր, քան անհրաժեշտ էր կտրուկ տատանում թույլ չտալու համար: Այսինքն, Կենտրոնական բանկը մի տեսակ աչք էր փակել սպասողական դոլարայնացման առաջ: Եթե նախկինում անընդհատ նշվում էր ազգային արժույթը կարեւորելու մասին, քայլեր արվում նրա դերը մեր տնտեսության մեջ ուժեղացնելու համար, ապա անցյալ տարվա մարտի 3-ից հետո այդ ամենը մոռացվեց: Դոլարի հանդեպ բնակչության պաշտամունքը (ավելի հարմար բառ դժվար է գտնել), նրա հետագա արժեւորման սպասումները քաղաքացիների եւ գործարարների մեջ, ավելանալով օբյեկտիվ իրողությունների հետ, որոնց մասին նշեցինք վերեւում, հանգեցրեցին դրամի նման կտրուկ արժեզրկմանը:**

**Մարդկանց ավելի շատ հետաքրքրում է, թե որքա՞ն եւ մինչեւ ե՞րբ կշարունակվի արժեզրկվել դրամը: Այս հարցի պատասխանը ստանալու համար դարձյալ պետք է վկայակոչենք արժեզրկման պատճառները: Այսինքն, անհնար է հստակ ժամկետներ եւ փոխարժեքի չափ մատնանշել, բայց մի բան կարելի է հաստատ պնդել՝ փոխարժեքի վրա էական ազդեցություն կարող է թողնել մարդկանց սպասումները: Այսինքն, եթե բոլորս, անընդհատ սպասելով, որ դոլարը կբարձրանա, նետվենք այն գնելու, դրանով խուճապ կստեղծենք եւ կնպաստենք դրամի շատ ավելի կտրուկ արժեզրկմանը: Այնպես որ, դոլարով գործարքներ կատարելու անհրաժեշտություն չունեցողներին հարկ չկա իրենց մոտ եղած դրամը փոխանակել: Իսկ որ դրամի արժեզրկումը, որոշ առումներով դրական լինելով արտահանման համար, այնուամենայնիվ, հիմնականում բացասական երեւույթ է, ակնհայտ է: Դրա հետեւանքով աճում են ապրանքների գները, նվազում է դրամային եկամուտներ ունեցողների, որոնք բնակչության գերակշիռ մասն են կազմում, գնողականությունը եւ ընդհանուր առմամբ բնակչությունն ավելի է աղքատանում: Այս երեւույթի դեմ պայքարը նախկինում Կենտրոնական բանկի գերակայությունն էր: Այժմ ԿԲ-ն անգամ խուճապի չմատնվելու հայտարարությամբ հանդես չի գալիս: Ասես այս ամենն իրեն չի վերաբերում եւ իր կողքով է անցնում:**

# Դեպի Հայաստան դրամական փոխանցումների ծավալը նվազել է

**Այս մասին հայտնում են Կենտրոնական բանկի մամուլի ծառայությունից: 2009-ին մեր երկիր մտնող դրամական փոխանցումները կազմել են 321 միլիարդ դրամ, որը 20 տոկոսով քիչ է 2008-ի ցուցանիշից: Ընդ որում, եթե 2008-ին մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է մոտ 270 հազար դրամ, ապա 2009-ին եղել է 236 հազար դրամ:**

**Անշուշտ, չի կարելի պնդել, որ սրա պատճառն այն է, որ մեր քաղաքացիները ավելի քիչ են զգում արտերկրից դրամական փոխանցումների կարիքը: Պատճառը թերեւս այն է, որ դեռեւս շարունակվում է համաշխարհային տնտեսական ճգնաժամն, ու տարբեր երկրներ կրճատում են միգրանտների թիվը:**

Հ. Ա.

# Ողջ Ադրբեջա՞նը պիտի քվեարկի ԼՂ կարգավիճակի հանրաքվեին

## *Պարզվում է, մինչեւ անմտություն կարող է հասնել քաղաքական սնանկությունը*

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների առնչությամբ խորհրդակցությունները ԵԱՀԿ Մինսկի խումբը շուտով կշարունակի հենց տարածաշրջան այցելության ընթացքում, ընդ որում, ինչպես տեղեկացնում է ԵԱՀԿ պաշտոնական կայքէջում տեղադրված ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունը, համանախագահները կայցելեն ոչ միայն Երեւան, այլեւ Լեռնային Ղարաբաղ:

Մարտի 16-ին Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ Փարիզում տեղի ունեցած հանդիպումից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները այն կառուցողական են որակել այնպես, ինչպես մինչ այդ կառուցողական էին որակել Ադրբեջանի արտգործնախարարի հետ հանդիպումն ու քննարկումները:

Հանդիպումներն ու քննարկումները հաճախ կառուցողական են որակում նաեւ Բաքվում, սակայն Եվրոպայից վերադարձին ադրբեջանցի պաշտոնյաների, մասնավորապես ԱԳ նախարարի եւ երկրի նախագահի ձեւակերպումներն ու գնահատականներն անմիջապես փոխվում են:

Երեկ Բաքվում **Էլմար Մամեդյարովը** ասուլիս է հրավիրել, ըստ էության, շարունակելով սեփական «երազների» մատուցումը՝ որպես ԼՂ հարցի կարգավորման միջոցառումների ժամանակացույց-հերթականություն: Նույն օրը, երբ Հայաստանի արգործնախարարը Փարիզում հանդիպում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, Էլմար Մամեդյարովը Բաքվում հայտարարում է կարգավորման միջոցառումների մի սցենար, որ ավելի շուտ ցանկությունների շարադրանք է հիշեցնում:

«**Ազգը**» ներկայացրել է Ադրբեջանի դիրքորոշման մատուցումը a la Մամեդյարով, ընդգծելով, որ Ադրբեջանի գնահատականներն անմտության են հասնում: «Ռազմական հռետորիկան դադարեցնելու համար անհրաժեշտ է լուծել խնդիրները, որ ծնում են դրա կիրառումը», հայտարարել էր Էլմար Մամեդյարովը՝ որպես խնդիրներ ներկայացնելով «օկուպացված տարածքներից հայկական զինուժի դուրսբերումը, այդ տարածքների ազատումը, փախստականների վերադարձը»:

Ադրբեջանի արտգործնախարարը նաեւ հայտարարել էր, թե մադրիդյան սկզբունքները «նախատեսում են զինուժի դուրսբերումը Ադրբեջանի հինգ շրջաններից կամ՝ «հինգ+», նկատի ունենալով նաեւ Լաչինը»:

Հինգ շրջաններ «ազատելուն», ըստ Մամեդյարովի, պետք է իբր հետեւի Լաչինի, հետո էլ Քարվաճառի ազատումը, ընդ որում, արդեն իսկ պատրաստ են «այդ շրջանների վերականգնման նախագծերը», իսկ վերադարձողների անվտանգության ապահովման համար «նախատեսվում է միջազգային դիտորդների տեղակայում»: Միայն այս ամենից հետո, Մամեդյարովի մեկնաբանությամբ, պիտի լուծվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը՝ «Ադրբեջանի կազմում ամենաբարձր ինքնավարությամբ»:

Մամեդյարովը երեկ շարունակել է իր «երազանքների» շարքը, ներկայացնելով, թե «Ադրբեջանի կազմում ԼՂ կարգավիճակի հանրաքվեին պիտի մասնակցեն Ադրբեջանի բոլոր քաղաքացիները երկրի ողջ տարածքում»:

Նման հայտարարություն կարող են անել նրանք, որոնք հեռու են բանակցային գործընթացից, ու առավել եւս, քաղաքականությամբ չեն զբաղվում, քանի որ այսօրինակ մոտեցում բարձրաձայնելով Բաքուն միայն հաստատել է, թե որքան կարիք ունի ներքին լսարանի առջեւ արդարացնելու այն իրավիճակը, որ բնութագրվում է արդեն 20 տարի անկախ կյանք ունեցող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյությամբ:

Մամեդյարովը ոչ միայն փաստորեն ներկայացրել է միջոցառումների «հերթականությունը», այլեւ հայտարարել, թե երբ այդ ամենը տեղի կունենա՝ չգիտի: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե Մամեդյարովի ասածներն արդեն համաձայնեցված են, ու միայն անորոշ է մնացել ժամանակագրությունը: Ամեն դեպքում, «հեռատես ու խորագիտակ» Մամեդյարովը հայտարարել է, թե «բռնի տեղահանվածների վերադարձով ազատագրված օկուպացված տարածքներ բանակցությունները դեռ կշարունակվեն»:

Նախորդ օրը «**Ազգը**» հրապարակել էր մի վերլուծություն, որ վերաբերում էր ադրբեջանական բանակի հուսալքված վիճակին ու ամեն ինչ խեղդող կոռուպցիային՝ ի դեմս պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի: Դժվար թե երկրի արտգործնախարարությունը աչխատանքի որակով շատ հեռու լինի պաշտպանության նախարարությունից, ասել է, թե Էլմար Մամեդյարովի հայտարարություններն ավելի շուտ ինքնահամոզման փորձ են, քան տեղեկություններ, այն էլ ոչ ադրբեջանցի լսարանի համար:

Ակնհայտ է, որ նման հայտարարությունները բնավ էլ բարձրագույն գիտելիքի ու մտածողության արդյունք չեն, այլ՝ լոկ ինքնարժեւորման փորձեր, որոնցով Ադրբեջանը ցանկանում է թշնամանքի պրոպագանդայի տակ մնացած սեփական ժողովրդին ներշնչել, թե Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը հենց այդպիսին կարող է լինել: Այսպես լինում է այն դեպքերում, երբ մարդու կարողություններն ու գիտելիքը սահմանափակ են ու ամեն «բլթոց» օդապարիկի նման գեղեցիկ ու տպավորիչ կարող է թվալ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Միջազգային հեռախոսային քարտ՝ «Արդշինինվեստբանկի» հաճախորդներին

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», բանկի մասնաճյուղերում Intel Express դրամական փոխանցումների համակարգով գումարներ ուղարկող կամ ստացող բոլոր հաճախորդները, անկախ փոխանցվող գումարների չափից, կարժանանան միջազգային հեռախոսակապի քարտի: Այս ակցիան կգործի երկու ամիս՝ մարտի 15-ից մայիսի 15-ը:

Տեղեկացվում է, որ միջազգային դրամական փոխանցումների ոլորտում Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից մեկը համարվող «Արդշինինվեստբանկի» հաճախորդները շուտով հնարավորություն կունենան օգտվելու նոր միջազգային դրամական փոխանցումների համակարգերի ծառայություններից:

Խոսելով վերոնշյալ ակցիայի մասին, «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ **Ներսես Կարամանուկյանը** նշել է. «Մեր բանկում արդեն ձեւավորվել է բարի ավանդույթ՝ հաճելի անակնկալներ մատուցել դրամական փոխանցումների համակարգերից օգտվող մեր հաճախորդներին: Intel Express-ի հետ իրականացվող այս ակցիան հնարավորություն է տալիս մեր հաճախորդներին անվճար զրուցելու արտերկրում գտնվող իրենց մտերիմների հետ»:

Ա. Մ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Հայերի ցեղասպանության կենդանի ապացույցը

ՌՈԲԵՐՏ ՖԻՍՔ

*Անգլիական «Ինդիփենդենտ» թերթի մարտի 9-ի համարում **Ռոբերտ Ֆիսքը** գրում է, թե Մ. Նահանգները փորձում է ժխտել, որ Թուրքիայի կողմից 1915-ին 1,5 միլիոն հայերի սպանդը «ցեղասպանություն» է, բայց «ապացույցներն այստեղ են, Բեյրութի մոտ գտնվող բլրալանջի որբանոցում»:*

Դա մի փոքրիկ գերեզման է՝ նկատելի իր էժանագին եռանկյունաձեւ բետոնածածկույթով եւ դեղին վայրի շուշաններով: Այստեղ հանգչում են արդեն փոշիացած ոսկորներն ու գանգերը մոտ 300 երեխաների՝ հայ որբերի, որոնք խոլերայից եւ «սովից մահացան, մինչ թուրքերը փորձում էին «թուրքացնել» նրանց Բեյրութի հյուսիսում գտնվող կաթոլիկական քոլեջում: Դա անհայտ պատմությունն է 3-15 տարեկան այն մոտ 1.200 մազապուրծ երեխաների, որոնք այդ խիտ բնակեցված գիշերօթիկում են ապրել:

Բարաք Օբաման եւ նրա դյուրաթեք բնավորությամբ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, որոնք այժմ ողորմելիորեն արշավ են ծավալել Մ. Նահանգների Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, պետք է գան այստեղ եւ գլուխները ամոթից խոնարհեն, քանի որ կատարվածը ողբերգական եւ զարհուրելի մի պատմություն է ընդդեմ փոքրիկ, անօգնական էակների, որոնց ընտանիքներն արդեն սպանված էին թուրքական բանակի կողմից, եւ որոնցից ոմանք ստիպված էին, սովից չմահանալու համար, մանրացնել եւ ուտել իրենց մահացած հայրենակիցների կմախք դարձած մարմինները:

1915-ի ցեղասպանության ճարտարապետներից Ջեմալ փաշան եւ Թուրքիայի առաջին ֆեմինիստ հորջորջված Հալիդե Էդիպ Ադիվարն էին ղեկավարում սարսափի այդ որբանոցը, որտեղ հայ երեխաներին զրկում էին իրենց հայկական ինքնությունից, տալիս նրանց թուրքական անուններ, վայրենաբար ծեծում հայերեն խոսելու համար եւ ստիպում դառնալ մահմեդականներ: «Անտուրա Լազարական» քոլեջի (Սբ Ղազարի միաբանության) կաթոլիկ հոգեւորականները գրառել են, թե ինչպես այդ օջախի դասատուներին վտարելուց եւ զանգակատան վրայից Մարիամ Աստվածածնի արձանը ցած իջեցնելուց հետո Ջեմալ փաշան հայտնվել է շքամուտքի առաջ իր գերմանացի թիկնապահի հետ՝ որպես այդ հաստատության նոր ղեկավար, մինչ «մուեզզինը» (մոլլան) սկսել է մահմեդականներին աղոթքի հրավիրել:

ՄԱԿ-ի ընդունած ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիան ներառում է մի հոդված, որտեղ նշված է. «Երեխաներին մի խմբից մյուսը բռնի տեղափոխումը», որը համապատասխանում է Լիբանանում թուրքերի գործունեություններին: Դեռեւս պահպանված են լուսանկարները կիսամերկ հայ երեխաների, որոնք քոլեջի տարածքում ֆիզդաստիարակության պարապմունքների են մասնակցում Ջեմալ փաշայի եւ Հալիդե Ադիվարի հսկողության ներքո:

Նախքան մահանալը՝ 1989-ին, **Գառնիկ Փանյանը**, որը 1916-ին, երբ Անտուրա էր հասել, ընդամենը 6 տարեկան էր, գրառել է հայերենով, թե ինչպես են իր անունը փոխել եւ իրեն տվել «551» համարը որպես ինքնության «վկայական»: **«Ամեն արեւամուտին ավելի քան 1000 որբերի ներկայությամբ թուրքական դրոշը ցած էր իջեցվում «երկար ապրի գնդապետ փաշան» հանգերգի ներքո: Դա օրվա «արարողության» մասն էր, երկրորդը՝ սխալներ գործողներին պատժելու մասն էր, որի ընթացքում «ֆալախաներով» (մականներով) ճիպոտահարում էին մեր ներբանները՝ հայերեն խոսելու համար»:**

**Փանյանը նկարագրում է այնուհետեւ, թե ինչպես երեխաներից շատերը մահանում էին ֆիզիկական թուլության հետեւանքով՝ չդիմանալով դաժան վերաբերմունքին, եւ թե ինչպես նրանց թաղում էին քոլեջի հին մասնաշենքի հետեւի մասում: «Գիշերները շնագայլերն ու վայրի շները փորում էին ու հոշոտում նրանց մարմինները, իսկ ոսկորները ցիրուցան անում այստեղ ու այնտեղ: ...Դեպի մոտակա անտառը խնձոր կամ այլ մրգեր որոնելու նպատակով դուրս եկած երեխաների ոտքերը հաճախ էին դեմ առնում այս ոսկորներին: Նրանք այդ ոսկորները գաղտնաբար իրենց սենյակներն էին տանում ապուր պատրաստելու եւ կրծելու, քանի որ բավականաչափ սնունդ չէին ստանում որբանոցում: Նրանք փաստորեն ուտում էին իրենց մահացած ընկերների ոսկորները...»:**

Անտուրա քոլեջի ավագ հոգեւորական Էմիլ Ժոպենը 1947-ին կրթօջախի տարեգրությունում, օգտագործելով արխիվային արձանագրությունները, գրում է, որ «**հայ որբերին թլփատում էին, մահմեդականացնում եւ արաբական կամ թուրքական անուններ տալիս նրանց: Նոր անունները գրեթե միշտ պահպանում էին իրենց նախնական անունների սկզբնատառերը: Այդպիսով, օրինակ, Հարություն Նազարյանը դառնում էր Համեդ Նազին, Պողոս Մերդանյանը՝ Պեկիր Մոհամմեդ, իսկ Սարգիս Սաֆարյանը՝ Սաֆադ Սուլեյման**»:

Լիբանանում ծնված ամերիկահայ ինժեներ **Միսաք Քելեշյանը**, որը հայոց պատմությունն է ուսումնասիրում որպես հոբբի, գրել է բրիտանա-ֆրանսիական զորքերի կողմից ազատագրած Անտուրայի տարածք հասած ամերիկյան Կարմիր խաչի պաշտոնյա, մայոր Սթիվեն Թրոուբրիջի 1918-ին գրած հազվագյուտ մի զեկուցագիրը (որն անձնական միջոցներով է հրատարակվել), որի տվյալները լիովին համապատասխանում են հայր Ժոպենի տվյալներին:

**«Հայ եւ քուրդ երեխաների ամեն մի հետք, ամեն մի հիշողություն պետք է առհավետ ջնջվեր: Երեխաները պարտավոր էին հետեւել իսլամական օրենքներին, պահպանել իսլամական ծեսերը եւ ավանդույթները: Հայերեն կամ քրդերեն ոչ մի բառ չէր թույլատրվում արտասանել: Դասատուներն ու վերահսկիչները հետեւում էին, որ թուրքական գաղափարներն ու սովորույթները դրոշմվեն երեխաների ուղեղներում»:**

**Հալիդե Ադիվարը**, որին տարիներ անց «Նյու Յորք թայմսը» պիտի գովաբաներ որպես «Թուրքիայի Ժաննա դ՛ Արկի» (մակդիր, որ հայերը իրավամբ հարցականի տակ են առնում), ծնվել էր Կոստանդնուպոլսում 1884-ին եւ օսմանյան մայրաքաղաքում հաճախել էր ամերիկյան քոլեջ: Երկու անգամ էր ամուսնացել եւ հեղինակ էր 9 վեպերի: Նույնիսկ Թրոուբրիջն է հաստատում, որ նա «ուշագրավ գրական կարողությունների տեր անձնավորություն էր»: Նա ծառայել էր Մուստաֆա Աթաթուրքի բանակում Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Հետագայում նա ապրել էր Բրիտանիայում եւ Ֆրանսիայում: Քելեշյանն է գտել նրա վաղուց մոռացված հիշողությունները, որոնք 1926-ին հրատարակվել են Նյու Յորքում: Դրանցում Հալիդեն վերհիշում է, թե ինչպես մի անգամ, երբ Ջեմալ փաշայի հետ շրջագայել է որբանոցում, ասել է. **«Ինչո՞ւ եք թույլ տալիս, որ թուրքական անուններով կոչեն հայերին: Պատմությունը մի օր հատուցում կպահանջի հաջորդ սերունդներից»: Ջեմալը պատասխանել է. «Դուք իդեալիստ եք եւ բոլոր իդեալիստների նման ձեր մեջ էլ բացակայում է իրականության զգացումը: Սա մահմեդական որբանոց է, եւ միայն մահմեդական որբերի է թույլատրված այստեղ ապրել»: Ըստ Ադիվարի, Ջեմալն իրեն ասել է, որ «չի կարող տեսնել նրանց փողոցներում մահանալիս»: Նա խոստացել է Հալիդեին, որ պատերազմից հետո «նրանք կվերադառնան իրենց ժողովրդի գիրկը»:**

**Իսկ Թալեաթի մասին նա գրում է. «Երբ խոսք բացվեց հայերի տեղահանությունների մասին, Թալեաթն ասաց. «Լսիր, Հալիդե.. ես էլ քեզ նման նույն բարի սիրտն ունեմ, եւ գիշերները ես էլ արթուն եմ մնում՝ խորհելով այդ մարդկանց տառապանքների մասին: Բայց դա անձնական խնդիր է, իսկ ես այստեղ եմ մտածելու ոչ թե իմ զգացմունքների, այլ իմ ժողովրդի մասին: ... Ես հավատացած եմ, որ քանի դեռ մի ժողովուրդ իր շահերին համապատասխան է գործում եւ հաջողության հասնում, աշխարհը հիանում է նրանով եւ համարում, որ բարոյական է կատարածը: Ես պատրաստ եմ մեռնելու իմ կատարածի համար եւ գիտակցում եմ, որ դրա համար էլ մահանալու եմ»:**

**Թրոուբրիջն** անձամբ ականատես է եղել այդ տառապանքներին, որոնց մասին Թալեաթն էր ակնարկել: Անտուրայի որբերից շատերն ականատես էին եղել իրենց ծնողների սպանություններին եւ քույրերի բռնաբարություններին: «**Մալգարացի Լեւոնին տնից դուրս էին հանել իր 12 եւ 14-ամյա քույրերի հետ: Աղջիկներին թուրքերի հետ համագործակցող քրդերը տարել էին որպես հարճեր, իսկ տղային չարչարել եւ քաղցած սպանել**», գրում է Թրոուբրիջը:

Տասը տարեկան **Թագուհին** Ռոդոսթոյից բեռնատար վագոնով նույնպես Անտուրա էր հասել այն բանից հետո, երբ ծնողները տիֆից էին մահացել իր ձեռքերում, իսկ երեք եղբայրները՝ գնացքում, ճանապարհին: Թուրք ոստիկանները նրան Մուզեյյան անունն էին տվել:

Թրոուբրիջը շատ այլ ողբերգական պատմություններ է գրի առել Անտուրայի որբանոցում: Ըստ նրա, միայն 669 երեխաներ են ողջ մնացել, 456 հայեր, 184 քրդեր եւ 29 սիրիացիներ: Թալեաթ փաշան իր արժանի պատիժը գտավ 1922-ին Բեռլինում: Ջեմալ փաշան սպանվեց Թիֆլիսում: Հալիդե Ադիվարն ապրեց Անգլիայում մինչեւ 1939 թիվը, որից հետո վերադարձավ Թուրքիա եւ նախ դարձավ անգլերենի գրականության դասախոս, ապա ընտրվեց պատգամավոր թուրքական խորհրդարանում: Նա մահացավ 1964-ին, 80 տարեկանում:

Միայն 1993-ին հայտնաբերվեցին վերոնշյալ երեխաների ոսկորները, երբ Սբ Ղազարի միաբանության հայրերը որոշեցին ընդլայնել պատմական կրթօջախի տարածքը, եւ շինարարական աշխատանքների համար բանվորները սկսեցին փորել հողը: Այն, ինչ մնացել էր այդ երեխաների ոսկորներից, ամփոփվեց փոքրիկ գերեզմանատանը՝ քոլեջի հոգեւորականների դամբանների հարեւանությամբ: Քելեշյանն ինձ ուղեկցեց այդ տխուր վայրը, որտեղ բարձր ծառեր են, բայց որտեղ ոչ մի անվանաքար չես գտնի:

Թարգմանեց՝ Հ. Ծ.

ԿՐԿԻՆ URIAH HEEP-Ի ՀԱՄԵՐԳԻ ՄԱՍԻՆ

# Արձագանքում է «Վիբրոգրաֆուս» ՍՊԸ-ն

Ի պատասխան ս. թ. մարտի 13-ի «**Ազգ**» թերթում տպագրված «Ի՞նչ եղավ Uriah Heep խմբի համերգի հասույթը» հոդվածի՝ ցանկանում եմ տեղեկացնել, որ լրագրող Հասմիկ Հարությունյանի ներկայացրած փաստերն իրականությանը չեն համապատասխանում: Ավելին, հոդվածում նշված էր, որ նա հարցազրույց է ունեցել «Վիբրոգրաֆուս» ընկերության տնօրեն Վարդան Գրիգորյանի հետ: Ցանկանում եմ պարզաբանել, որ իմ ներկայացրած «տեղեկությունները» բջջային հեռախոսի միջոցով երկու րոպե տեւած զրույցի արդյունք են եղել՝ ինձ համար շատ անհարմար պահի:

Մեր ընկերությունն արդեն երկու տարի է, ինչ կազմակերպում է համաշխարհային համբավ ունեցող ռոք եւ ջազ երաժիշտների համերգները Երեւանում: Այս համերգների կազմակերպումը բավականին բարդ եւ լուրջ գործընթաց է, որի արդյունքում հայ հանդիսատեսը հնարավորություն ունի ունկնդրելու շատ սպասված եւ սիրված հայտնի երաժիշտների կենդանի կատարումը:

Ցանկանում եմ նշել, որ միայն մեր կազմակերպության աշխատակիցների բարձր պրոֆեսիոնալիզմի շնորհիվ հնարավոր եղավ կազմակերպել տեխնիկապես այդքան բարդ համերգներ Երեւանում: Ավելին, մեր կազմակերպությունը միակն է Հայաստանում, որն իր վրա վերցրեց պատասխանատվություն՝ կազմակերպելու միջազգային ռոք աստղերի համերգները:

2009-ին մենք կազմակերպել ենք «Jethro Tull» եւ «Uriah Heep» խմբերի համերգները: 2010-ին մեր նախաձեռնած «Համաշխարհային երաժշտություն» փառատոնի շրջանակներում տեղի կունենան «Deep Purple», «John Mclaughlin», «Ian Anderson», «Angelo Debarre» երաժիշտների համերգները, ինչպես նաեւ առաջիկա մեր ծրագրերում նախատեսել ենք կազմակերպել «Jo Coker»-ի, «Paco De Lucia»-ի համերգները, իսկ 2011-ին աշխատելու ենք կազմակերպել «Eric Clapton»-ի եւ այլ հայտնի երաժիշտների համերգները Հայաստանում:

Հավատում ենք, որ մեր աշխատանքը սիրով եւ երախտագիտությամբ է ընդունվում հայ հանդիսատեսի կողմից, եւ հուսով ենք, որ այս դժվարին աշխատանքը ճիշտ կգնահատեն նաեւ լրագրողները:

Ինչ վերաբերում է «Uriah Heep» խմբի համերգից գոյացած հասույթի օգտագործմանը բարեգործական նպատակներով, հայտնում ենք, որ չունենալով հովանավորներ՝ Հայաստանում ռոք համերգները չեն կարող լինել շահութաբեր, եւ այդ իսկ պատճառով նշված համերգի հետ կապված բոլոր ծախսերը փակվել են տոմսերի իրացումից: Այսպիսով, չնայած այն փաստին, որ բավականին քանակությամբ տոմսեր են վաճառվել, այդուհանդերձ, գոյացած գումարը նույնիսկ բավարար չէր բոլոր ծախսերը փակելու համար:

Մենք ունենք մանրամասն տեղեկատվություն ոչ միայն վաճառված տոմսերի քանակի, այլեւ իրականացված վճարումների վերաբերյալ: Հավաստիացնում եմ, որ մեր կազմակերպության ֆինանսական մենեջմենտը իրականացվում է բարձր մակարդակով: Մեր իրականացրած բոլոր ծրագրերն ունեն փաստացի հիմքեր, եւ, բնականաբար, այդ ամենը ներկայացնելը երկու րոպեանոց հեռախոսազրույցի նյութ չէ:

Հարգանքով՝

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
«Վիբրոգրաֆուս» ՍՊԸ-ի տնօրեն

**Խմբ. կողմից.-** Այն, որ Վարդան Գրիգորյանը տեղյակ էր, որ «**Ազգ**» օրաթերթից իրեն զանգահարելու են հարցազրույց վերցնելու նպատակով, փաստ է. նրան լրագրողի խնդրանքով նախօրոք տեղեկացրել էր «Շանթ» հեռուստաընկերության ներկայացուցիչ Անդրեյ Սիմոնյանը:

Առաջին հեռախոսազրույցի ժամանակ Վարդան Գրիգորյանին իսկապես անհարմար էր պատասխանել հարցերին: Նա ասաց, որ նկարահանում ունի, եւ եթե հնարավոր է, զանգեն մի քանի ժամից: Մի քանի ժամ անց՝ երկրորդ հեռախոսազանգի ժամանակ, լրագրողի հարցին՝ «Այժմ հարմա՞ր է, կարո՞ղ ենք զրուցել», Գրիգորյանը տվել է դրական պատասխան: Զրույցի ժամանակ նա եւս մեկ անգամ հարցրել է՝ «Ուզում եք հոդվա՞ծ գրել դրա մասին», եւ կրկին ստանալով դրական արձագանք, պատասխանել է լրագրողի հարցերին: Ակնհայտ է, որ Գրիգորյանը գիտեր, որ համերգի մասին լրագրողը հոդված է գրում եւ իր հետ փոքրիկ հեռախոսազրույցն էլ նպատակ ուներ պարզաբանել մի շարք հարցեր:

Գրիգորյանը հեռախոսազրույցի ժամանակ որեւէ փաստ չի ներկայացրել: Կարծում ենք, եթե դրանք լինեին՝ կներկայացներ: Իսկ եթե պահն էր անհարմար, գուցե առաջարկեր ավելի ուշ զանգահարել կամ հանդիպել: Եթե կային փաստեր, ապա Գրիգորյանը պետք է շահագրգռված լիներ դրանք ներկայացնելու լրագրողին: Կարծում ենք՝ կազմակերպության ղեկավարը պետք է գիտակցեր, որ ներկայացնելով համերգի մասին փաստացի տեղեկություններ, նաեւ անվճար կգովազդեր իրեն: Բայց Գրիգորյանը դա էլ չարեց: Զարմանալին այն է, որ փաստեր չներկայացնելով՝ Գրիգորյանը նշում է, որ դրանք խեղաթյուրվել են:

# Էստոնահայերը ցանկանում են հիմնել կուսակցություն

Էստոնիայի հայ համայնքն այնքան էլ մեծ չէ: «Արարատ» հայկական մշակութային կենտրոնի տվյալներով՝ այսօր Էստոնիայում բնակվում է երկու հազար հայ, որոնց հիմնական մասը տեղակայված է մայրաքաղաքում: Թեպետ համայնքը փոքր է, սակայն էստոնահայերը մտադրվել են մասնակցել երկրում ընթացող քաղաքական ու տնտեսական ծրագրերին ու իրենց ներդրումն ունենալ երկրի բարգավաճման գործում: Այդ կապակցությամբ էստոնահայերը մտադրվել են հիմնել կուսակցություն: Rostimes-ի հաղորդմամբ՝ այժմ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը ղեկավարում է Գրիգոր Հայրապետյանը: Գրանցման համար անհրաժեշտ է, որ կուսակցության շարքերում անդամագրված լինեն շուրջ 1000 քաղաքացի, այդ պատճառով նախաձեռնության հեղինակները կոչով դիմել են մի շարք ազգային փոքրամասնությունների՝ միանալ իրենց նախաձեռնությանը:

«Մեր նպատակն է էստոնացի հասարակության ընկալմանը հասցնել, որ էստոնահայերը չեն ցանկանում ներկայանալ փոքրամասնության դիրքերից: Մենք ցանկանում ենք օգտակար լինել էստոնական հասարակությանն ու պետությանը», մեկնաբանել են նախաձեռնության հեղինակները: Նրանք նաեւ հավելել են, որ ցանկանում են պայմաններ ստեղծել պատմական հայրենիքից հեռու հայոց լեզվի եւ մշակույթի բնականոն զարգացման համար: «Տարածելով հայկական մշակույթ եւ հայոց լեզու Էստոնիայում, մենք առաջնահերթ արտահայտում ենք հոգածություն մեր երեխաների ապագայի նկատմամբ»:

Էստոնահայերը ցանկանում են նաեւ պայմաններ ստեղծել լրատվամիջոց հիմնելու, որը պետք է հեռարձակվի հայերեն:

Ի դեպ, հայկական կուսակցություն ստեղծելու գաղափարն արդեն հաստատել է Տալլինի քաղաքապետ Էդգար Սավիսաարը: Հ. Հ.

# «Եթե հարկ լինի, 100 հազար հայերին կվտարեմ երկրից, որովհետեւ նրանք իմ քաղաքացիները չեն»

## *Թուրքիայի վարչապետ Էրդողանի BBC-ին տված հարցազրույցի Հայաստանին վերաբերող հատվածը*

***Մեծ Բրիտանիա կատարած այցելության ընթացքում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հարցազրույց է տվել BBC-ի թուրքական ծառայությանը: Հարցազրույցի տեքստը մարտի 16-ին հրապարակվել էր թուրքական ծառայության կայքէջում, իսկ մարտի 17-ին թուրքական NTV-ն հեռարձակել էր հարցազրույցը: Վարչապետ Էրդողանի «Եթե հարկ լինի, 100 հազար հայերին կվտարեմ երկրից» հայտարարությունը սկանդալային բնույթ հաղորդեց հարցազրույցին, ոչ միայն դրա համար, որ վտարման ենթակա հայաստանցիների թիվը Թուրքիայում ընդամենը շուրջ 10-12 հազար է, այլեւ այնտեղ կան հակասական մտքեր, քանի որ ինքը 2009-ի մայիսին փոքրամասնությունների վտարումը երկրից հրապարակավ համարել էր ֆաշիստական դրսեւորում:***

***Էրդողանի հարցազրույցը լայն արձագանք գտավ ինչպես Հայաստանում, այնպես էլ Թուրքիայում եւ նրա սահմաններից դուրս: «Միլլիեթի» երեկվա համարում Ջան Դյունդարը «հայերին վտարելու» Էրդողանի պատրաստակամությունը համեմատեց 1915-ին իթթիհատականների «տեղահանության վճռականության» հետ, «Թարաֆում» դոկտ. Ջենգիզ Աքթարը նշեց, որ «վտարման համար նախ պետք է Հայաստանի սահմանը բացել», իսկ «Ռադիկալը» որակեց «երկրորդ տեղահանություն»:***

***Հատկանշական է, որ հայտարարության համար վարչապետ Էրդողանին դատապարտեց նաեւ Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահի Դենիզ Բայքալը, ընդգծելով. «Աշխատանք որոնելու համար Թուրքիա ժամանած մարդկանց օգտագործումը որպես քաղաքական տարաձայնության լուծման միջոց հակասում է մարդու իրավունքներին, դա ահավոր եւ անփառունակ հայտարարություն է»: Մինչդեռ Թուրքիայից հայերի վտարման գաղափարը առաջ էր քաշել հենց այդ կուսակցությունը, ի դեմս փոխնախագահի եւ նախկին դեսպան Օնուր Օյմենի, ինչպես նաեւ պատգամավոր տիկ. Ջանան Արըթմանի:***

***Առաջին հայացքից գուցե մի քիչ ժամանակավրեպ թվա, սակայն վարչապետ Էրդողանի հարցազրույցը աղմկահարույց է, արձագանքները դեռեւս կշարունակվեն, ուստի եւ նպատակահարմար ենք գտնում ներկայացնել դրա՝ հայերին եւ Հայաստանին վերաբերող հատվածի ամբողջական թարգմանությունը.***

**- Դուք համամի՞տ եք քննադատություններին նրանց, ովքեր կարծիք են հայտնում, որ հայկական բանաձեւը նեղն է գցել Թուրքիայի արտաքին քաղաքականությանը: Թուրքիան որդեգրել է հարեւանների հետ առկա խնդիրները զրոյականի հասցնելու դիրքորոշում, սակայն ենթադրվում է, որ առաջիկայում կաճի հայկական բանաձեւ ընդունող երկրների թիվը: Այդ հարցը շուտով օրակարգ կմտնի Անգլիայում, այսպիսի պատրաստություն, ըստ տեղեկությունների, տեսնում են նաեւ Գերմանիայում: Հարեւանների հետ խնդիրները զրոյականի հասցնելու քաղաքականություն վարող Թուրքիան արդյոք չի՞ գժտվում մնացած աշխարհի հետ:**

- Մենք վճռականորեն շարունակում ենք «զրոյականի» քաղաքականությունը եւ շարունակելու ենք: Սակայն, երբ մեր մեկնած ձեռքը բռունցքով են դիմավորում, ապա այդ դեպքում շատ անելիքներ չենք ունենա: Ինչ էլ լինի, մենք խաղաղության, բարեկամության համար կմեկնենք մեր ձեռքը, միայն թե դիմացինի ձեռքը բռունցք չդառնա:

**- Ձեր կարծիքով, հայկական բանաձեւի հարցում մի՞թե խաթարվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության ընթացքը:**

- Ներկա պահին այդպիսի խնդիր գոյություն չունի: Հայաստանի հետ կապված զարգացումներն էլ ամենեւին նեղություն չեն, խնդիր չեն մեզ համար, իրականում այդ խնդիրն ունի Հայաստանը... Ներկա պահին Հայաստանը պետք է կարեւոր որոշում տա: Հայաստանը պետք է ազատվի սփյուռքի գրավից: Եթե կան երկրներ, որոնք սիրում են Հայաստանին, ապա ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի գլխավորությամբ պարտավոր են սփյուռքի գրավից ազատել Հայաստանը:

**- Ի՞նչ կասեք այլ երկրների խորհրդարաններում հայկական բանաձեւի ընդունման առնչությամբ:**

- Նրանցից ոչ մեկը չի հետաքրքրում մեզ: Նրանք որեւէ տեղ չունեն Հայաստան-Թուրքիա հարաբերություններում: Ինքնակամ դեր են փախցնում: Այս երկրներն ի՞նչ առնչություն ունեն Հայաստանի հետ, ո՞վ է տվել նրանց այդ դերը: Ո՞րտեղից է գալիս այդ դերակատարությունը: Եթե այս հարցում կան կողմ երկրներ, եթե կան, ապա նրանք են՝ Թուրքիան եւ Հայաստանը... Իսկ մյուսներն իրենց որոշումներով (ցեղասպանության ճանաչման) շոու են անում...եւ վնաս են պատճառում Հայաստանի ժողովրդին...այսպիսով փակուղու առջեւ է կանգնում այն, ինչ պետք է կատարվեր: Իմ երկրում 170 հազար հայ կա, որից 70 հազարը իմ քաղաքացիներն են: Սակայն առայժմ աչք ենք փակում մնացած 100 հազարին: Ինչ եմ անելու վա՞ղը, եթե հարկ լինի, այս 100 հազարին ասելու եմ. «Ելեք գնացեք ձեր երկիրը», դա եմ անելու: Ինչո՞ւ: Որովհետեւ նրանք իմ քաղաքացիները չեն... Պարտավոր չեմ իմ երկրում պահել: Այլ կերպ, նրանք (հայկական բանաձեւ ընդունող երկրները) իրենց այս վերաբերմունքով բացասական ներգործություն են ունենում մեր անկեղծ մոտեցումների վրա եւ դա չեն էլ զգում:

**- Հայկական բանաձեւի պատճառով ԱՄՆ-ի հետ առաջացած լարվածությունը չի՞ կարող մթագնել այն դերը, որը Թուրքիան ուզում է խաղալ Մերձավոր եւ Միջին Արեւելքում:**

- Մենք կանենք այն, ինչ որ հնարավոր է: Սակայն դրա համար ամեն ինչ կատարելու, մինչեւ վերջ գնալու կամ դեր փախցնելու առաջադրանք չունենք: Մենք բարի կամքով ձգտում ենք ինչ-որ բաներ անել... Մտածում ենք ինչպես նպաստել տարածաշրջանի, աշխարհի խաղաղությանն ու կողմերի հաշտեցմանը: Դրան ենք ձգտում: Առ այսօր Հայաստանի հետ հարաբերություններին մոտեցել ենք այդ նույն տեսանկյունից: Սակայն ոմանք հավանաբար չեն ուզում մեզ հասկանալ, իսկ դա վշտացնում է մեզ:

**- Դա չի՞ խաթարի Մերձավոր եւ Միջին Արեւելքում ավելի մեծ դերակատարություն ստանձնելու Թուրքիայի իղձերը:**

- Դա ընդամենը ցանկություն է եւ ամենեւին էլ պարտադիր չէ, որ անպայման իրականանա: Օրինակ, ներկա պահին մենք Իրաքի հետ 48 պայմանագիր ունենք ստորագրած, Սիրիայի հետ՝ 51: Մեզ հետ պայմանագիր ստորագրելիս Սիրիան պատճառաբանելով իր երկրում բնակվող հայերին, չի ասել՝ չեմ ստորագրի: Ինչո՞ւ: Որովհետեւ հավատում է, մենք էլ Սիրիային ենք հավատում:

**- Դուք նկատի ունեք միջնորդությո՞ւնը, եթե դա չլինի...**

- Միջնորդության հարցում Սիրիան մեր նկատմամբ բոլորովին այլ մոտեցում ունի... Այսինքն պետք է մի բան պարզորոշ ասել, հատկապես այն, որ Իրանը, Իրաքը, Սիրիան մեր տարածաշրջանում են գտնվում, ինչ խոսք, հայերն էլ: Օրինակ, մեծ թվով հայեր կան Իրանում, Սիրիայում նմանապես... Սակայն դա երբեք չի խանգարել, որ մենք այս երկրների հետ զարգացնենք հարաբերությունները: Եթե մենք մեզ հետ քաղաքացիական առնչություն չունեցող 100 հազար հայերին թույլ ենք տալիս ապրել եւ աշխատել մեր երկրում, ապա դա մեր ոճն է... Կարեւոր է նաեւ խաղաղության նկատմամբ մեր վերաբերմունքը երեւան հանելու առումով: Սակայն մենք էլ դրա դիմաց համահունչ վերաբերմունքի պետք է արժանանանք... Եթե չենք արժանանում, ապա մնում է, որ մեր գլխի ճարը տեսնենք:

**- Այսինքն խոսքը նրանց վտարման...**

- Եթե հարկ լինի...

**- Ասում եք, կվտարենք:**

- Բայց ոչ թե այսօր կամ վաղը...

Հ. Ջ.

# «Փարիզյան ակումբը» ներեց Աֆղանստանի բոլոր պարտքերը

Վարկատուների «Փարիզյան ակումբը» չեղյալ է հայտարարել Աֆղանստանի բոլոր պարտքերը, նշվում է ակումբի պաշտոնական մամլո տեղեկագրում:

2009-ի մարտի 20-ի դրությամբ «Փարիզյան ակումբին» Աֆղանստանի պարտքը գնահատվում էր 1,026 մլրդ դոլար: Նույն պահին երկրի ընդհանուր արտաքին պարտքը կազմում էր 2,104 մլրդ դոլար:

2010-ի հունվարի վերջերին Արժույթի միջազգային հիմնադրամը եւ Համաշխարհային բանկը հայտարարեցին, որ պատրաստ են պաշտպանել Աֆղանստանի պետական պարտքի դուրսգրման միջազգային ծրագիրը: Երկու կազմակերպությունները ստանձնեցին 1,6 մլրդ դոլարի վճարման համաստեղ պարտավորություններ:

Աֆղանստանը միջազգային ֆինանսական կազմակերպություններից օգնություն է ստանում մեծ պարտքեր ունեցող ամենաաղքատ երկրների աջակցության ծրագրի շրջանակներում:

Վարկատուների «Փարիզյան ակումբը» 1956-ին հիմնել են առավել զարգացած երկրները: Այդ ոչ պաշտոնական կազմակերպության գլխավոր գործառույթը կարիքավոր պետություններին վարկեր հատկացնելն է: Ներկայումս «Փարիզյան ակումբն» ունի 19 մշտական անդամ, որոնց թվում է Ռուսաստանը:



# Բելառուս-Եվրոխորհրդարան անհամաձայնություն

Արեւելյան գործընկերության ծրագրով խորհրդարանական վեհաժողովի (EURONEST) առաջին նիստը, որ ծրագրված էր անցկացնել մարտի 23-24-ին, հետաձգվել է անորոշ ժամանակով: Հետաձգման պատճառն է Եվրոխորհրդարանի եւ Բելառուսի միջեւ համաձայնության բացակայությունը, թե ովքեր պետք է ներկայացնեն Բելառուսը խորհրդարանական վեհաժողովում:

Բելառուսը պնդել է, թե այդ կառույցում պետք է ներգրավվեն բելառուս խորհրդարանականներ, մինչդեռ Եվրոխորհրդարանը դեռեւս մարտի 10-ին որոշում է կայացրել առաջին նիստին հրավիրելու Բելառուսի քաղաքացիական հասարակության ու ընդդիմության ներկայացուցիչներին:

Խորհրդարանական վեհաժողովի առաջին նիստին պիտի մասնակցեն 60 պատգամավոր Եվրամիության երկրներից եւ 10-ական ներկայացուցիչ Արեւելյան գործընկերության ծրագրում ընդգրկված 6 երկրներից, այդ թվում՝ Հայաստանից: Հետաձգումը անժամկետ է: Տարբեր աղբյուրներում նշվում է, թե վեհաժողովի առաջին նիստը կարող է տեղի ունենալ ապրիլի 25-ից հետո, երբ Բելառուսում կանցկացվեն տեղական ընտրությունները:

Ա. Հ.

# ԿԺԴՀ պետպլանի նախկին նախագահը գնդակահարվել է



**ԿԺԴՀ պետական պլանային կոմիտեի նախկին նախագահ Պակ Նամ Կին մահապատժի է ենթարկվել «երկրի տնտեսության միտումնավոր քայքայման» մեղադրանքով: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Ռոյթերի տվյալներով, նախկին պաշտոնյան գնդակահարվել է անցյալ շաբաթ: Պաշտոնական Փենյանի հայտարարության համաձայն, Պակ Նամ Կին «բուրժուական ծագումով մարդ էր, որը հեղափոխականների շարքերում ներդրվել էր Հյուսիսային Կորեայի ազգային տնտեսությունը ոչնչացնելու նպատակով»: Միեւնույն ժամանակ Yonhap գործակալությունը լավատեղյակ աղբյուրներ վկայակոչելով, նշում է, որ ԿԺԴՀ-ում չինովնիկները եւ բնակչությունը չեն հավատում հիշյալ մեղադրանքներին, գտնելով, որ նախկին պաշտոնյան դարձել է «քավության նոխազ», որի վրա բարդվել էր դրամական բարեփոխման ձախողման մեղքը:**

**2010-ի սկզբներին պաշտոնանկ արված Պակ Նամ Կին համարվում էր 2009-ի վերջերին ԿԺԴՀ-ում անցկացված դրամական բարեփոխման գլխավոր գաղափարախոսն ու իրականացնողը: Դրա ընթացքում ազգային արժույթը՝ վոնը, արժեզրկվեց եւ փոխանակվեց 100:1 հարաբերակցությամբ: Բացի դրանից, յուրաքանչյուր ընտանիքի պաշտոնապես թույլատրվեց փոխանակել 140 դոլարը չգերազանցող գումար:**

**Թեեւ դրամական բարեփոխումը կոչված էր զսպելու սրընթաց սղաճը եւ բնակչության կենսամակարդակի անկումը, արդյունքը ճիշտ հակառակը եղավ: Բացի դրանից, կենսապայմանների կտրուկ վատթարացումը եւ առաջին անհրաժեշտության ապրանքների պակասը երկրի մի շարք շրջաններում հանգեցրին փողոցային բախումների:**

# Պակիստանում 5 ամերիկացի մեղադրվում է ահաբեկչության մեջ

**Պակիստանի դատարանը ահաբեկչության մեղադրանք է ներկայացրել ԱՄՆ 5 քաղաքացիների, որոնք ձերբակալվել էին 2009-ի դեկտեմբերին Փենջաբի նահանգում: Նրանք մեղադրվում են «Ալ Ղաիդայի» պակիստանյան բջիջների հետ համատեղ ահաբեկչություններ նախապատրաստելու մեջ, նշում է Ֆրանսպրես գործակալությունը: Մեղադրանքի ապացուցման դեպքում բոլոր հինգն էլ կդատապարտվեն ցմահ բանտարկության:**

**Ավելի վաղ հաղորդվել էր, որ ձերբակալվածներին արտաքսելու են ԱՄՆ, որտեղ նրանց կներկայացվեր ահաբեկչական կազմակերպությանն օգնելու նպատակով հանցավոր պայման կնքելու մեղադրանք:**

**Ձերբակալվածները գանգատվում են, որ պակիստանյան բանտում իրենց խոշտանգում են: Սակայն իշխանությունները ժխտում են խոշտանգման հետ կապված մեղադրանքները:**

**Ամբաստանյալ 5 տղամարդկանց տարիքը 18-25 է: Նրանք բոլորն ապրել են Վաշինգտոնում եւ շրջակայքում, բայց ունեն պակիստանյան, եգիպտական եւ եմենյան ծագում: Քննիչները կարծում են, որ Պակիստան գալով՝ նրանք կապ են հաստատել տեղական ահաբեկչական խմբավորումների ներկայացուցիչների հետ:**

**Մեղադրական եզրակացության մեջ ասվում է, որ մեղադրյալները ծրագրել էին մի շարք հարձակումներ իրականացնել Պակիստանում, ինչպես նաեւ բարեկամ երկրների տարածքներում: Ավելի վաղ հայտարարվել էր, որ խոսքը մասնավորապես Աֆղանստանի մասին է, որտեղ 5 երիտասարդ ամերիկացիները պետք է թալիբների հետ համատեղ մարտնչեին ՆԱՏՕ-ի ուժերի դեմ:**

**Մեղադրյալները ժխտում են իրենց կապը ահաբեկչական խմբավորումների հետ եւ ասում են, որ իրենք մտադրվել էին անցնել Աֆղանստան, բայց՝ բարեսիրական գործունեության նպատակով:**

**Հինգ ամերիկացիների գործով դատական հաջորդ նիստը տեղի կունենա մարտի 31-ին:**

# Հրթիռակոծվել է Իսրայելի տարածքը

**Երեկ Գազայի հատվածից հրթիռ է արձակվել Իսրայելի տարածքի վրա: Սահմանից ոչ հեռու՝ Նեթիվ-հա-Ասարա բնակավայրի գյուղատնտեսական հողահանդակում ընկնելով՝ հրթիռը պայթել է: Պայթյունից զոհվել է այնտեղ աշխատող մի թաիլանդցի բանվոր: Հրթիռակոծման պատասխանատվությունը ստանձնել է «Անսար-ալ-Սուննա» անհայտ խմբավորումը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ այդ անունը կրող մի խմբավորում գործում է Իրաքում, իրեն համարելով «Ալ Ղաիդայի» դաշնակիցը:**

**Փորձագետները կարծում են, որ հրետակոծությանը կհաջորդի Իսրայելի «հատուցման հարվածը»: Որոշ տեղեկությունների համաձայն, իսրայելական տարածքը երեկ հրետակոծվել է երկու անգամ, սակայն ոստիկանությունում հաստատել են միայն Գազայից հրթիռի արձակման վերոհիշյալ փաստը:**

AZG NEW PDF.qxd 18/03/2010 22:38 Page 1



# «Շարական» անսամբլը՝ Լյուբլյանայում եւ Վիեննայում

Սլովենիայում շարունակվում է հայկական մշակույթի փառատոնը:



Վերջերս մայրաքաղաք Լյուբլյանայի «Ցանկարեւ դոմ» լեփ-լեցուն համերգասրահում տեղի ունեցավ հերթական համերգը, որը կազմակերպել էր «Կադանս» երաժշտական կենտրոնի նախագահ Նիկա Բաբայանը՝ իր արտասահմանյան գործակիցների օժանդակությամբ: Համերգի 1-ին բաժնում ելույթ ունեցավ «Շարական» հնագույն երաժշտության անսամբլը (գեղ. ղեկավար եւ դիրիժոր՝ Դանիել Երաժիշտ), 2-րդ բաժնում՝ «Շողակն» ժողովրդական գործիքների անսամբլը (ղեկ.՝ Համիկ Հարությունյան):

Այս երկու երաժշտախմբերի ծրագրի հիմնական մասը կազմված էր հայկական ժողովրդական երգերից ու պարեղանակներից: Երգերը ներկայացվեցին ե՛ւ բնիկ, անաղարտ տեսքով, ե՛ւ կոմիտասյան բազմաձայնությամբ համեմված, նաեւ տարբեր գործիքավորմամբ: Եվ ունկնդիրը հնարավորություն ուներ համեմատելու Համիկ եւ Ալիկ Հարությունյանների երգած ավանդական երգերը «Շարականի» մեներգիչներ Արմինե Սեյրանյանի, Սոֆյա Թումանյանի հնչեցրած կոմիտասյան երգերի, Գրիգոր Համբարձումյանի եւ Գեւորգ Հաղջյանի հոգեւոր երգերի կատարման հետ, կամ Գեւորգ Դաբաղյանի տրտմաշունչ դուդուկը համադրել Գեւորգ Թումանյանի կլառնետի ճախրանքի կամ Նաիրա Կաժոյանի ֆլեյտայի երկնասլաց հնչյունների հետ... Երաժիշտների եւ ունկնդիրների փոխըմբռնման գագաթնակետը «Մուսալեռցիների» «Գյամեր ֆստան» պարերգն էր՝ «Շարականի» կատարմամբ, որը սլովեն երաժշտասերները ուղեկցում էին երգի ռիթմին համահունչ հստակ ծափերով՝ մասնակցելով պարերգի արարմանը...

Խանդավառությամբ ընդունվեցին հատկապես Մեսրոպ Մաշտոցի, Մխիթար Այրիվանեցու (13-րդ .), Կոմիտասի հոգեւոր երգերը, ինչպես նաեւ Սայաթ-Նովայի, Պետրոս Ղափանցու (18 դ.), Գուսան Աշոտ տաղերը՝ նույնպես «Շարականի» կատարմամբ: Համերգը լուսաբանվեց Սլովենիայի հեռուստատեսությամբ: Դանիել Երաժիշտը, մասնավորապես, ասաց. «Հայաստանը, որպես քրիստոնեությունն առաջինը հռչակած պետություն, իր աշխարհագրական դիրքով, պատմական ճակատագրով հատուկ առաքելություն ունի համայն մարդկության ընտանիքում: Հայոց մշակույթն իր բնույթով ու ներուժով կոչված է հաշտեցնելու, ներդաշնակելու Արեւելքն ու Արեւմուտքը, դրանով հանդերձ, այն ոչ միայն արտացոլում է հայ ժողովրդի հոգու պատկերը, այլեւ համամարդկային կենսագրության մասն է կազմում, իր անկրկնելի գույնն ու բույրը հաղորդում է համաշխարհային քաղաքակրթությանը, նպաստում մարդկային հոգու կատարելագործմանն ու վերելքին»:

Ավստրիայում Հայաստանի Հանրապետության դեսպան պարոն Աշոտ Հովակիմյանի բարձր հովանավորությամբ «Շարական» անսամբլը մեկ համերգով հանդես եկավ Վիեննայում: Սուրբ Հռիփսիմե եկեղեցու կամարների ներքո հնչեցին շարականներ, տաղեր եւ գանձեր:

Յուրաքանչյուր երգի խորհուրդը մեկնաբանվում էր Դանիել Երաժիշտի ներածական խոսքով, ինչը նպաստում էր մատչելիությանը՝ առավել մերձեցնում կատարողներին եւ ունկնդիրներին:

Համերգին ներկա էին Աշոտ Հովակիմյանը, հայ համայնքի նախագահ Ռազմիկ Թամրազյանը, Վիեննայի օպերայի մեներգչուհի Համիկ Պապյանը, Մխիթարյան միաբանության ներկայացուցիչներ եւ այլ գործիչներ, որոնք համերգից տպավորված՝ իրենց գոհունակությունը հայտնեցին՝ շնորհավորելով երաժիշտներին:

Ս. Հռիփսիմե եկեղեցու քահանա, տեր Անդրեասի առաջարկությամբ «Շարական» անսամբլի մեներգիչները միացան տեղի երգչախմբին եւ մասնակցեցին կիրակնօրյա Պատարագին, իսկ Գեւորգ Հաղջյանը կատարեց ավագ սարկավագի պաշտոնը:

«Շարականի» արտասահմանյան համերգները մի անգամ եւս վկայեցին, որ ճշմարիտ մարդուն վեհացնող արվեստը վեր է ժամանակից, տարածությունից, նյութաշխարհի նկրտումներից: Պատահական չէ, որ հիշյալ փառատոնի պրոդյուսեր Գրեգորի Կարպովը «Շարական» անսամբլի համերգը բնորոշեց, որպես «Հրեշտակային երգեր, հրեշտակաձայն կատարում»:

**Հ. Գ.**-Շվեդիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման լուրը հասավ հյուրախաղերի օրերին: Եվ «Շարական» անսամբլը արձագանքեց Մեծ եղեռնին նվիրված երկու ստեղծագործությամբ՝ Էդվարդաս Մեժելայտիսի խոսքերով գրված ՝ Դանիել Երաժիշտի «Ապրիլի 24» եւ «Թող հնչեն շեփորք» ազգային-հայրենասիրական երգերով: Երաժիշտները հարգանքի տուրք մատուցեցին «Մուսա լեռան 40 օրը» վեպի հեղինակ Ֆրանց Վերֆելին, երգելով նաեւ իր հուշարձանի մոտ: Փոքրիկ մի ելույթ տեղի ունեցավ նաեւ Մխիթարյան միաբանության թանգարանում:

Գ. Դ.

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

# Յարոսլավ Ռոմանովիչ Դաշկեւիչ

**Լվով քաղաքից տխուր լուր ստացվեց: Կյանքից հեռացել է մեր ժողովրդի լավագույն բարեկամներից մեկը՝ ուկրաինացի նշանավոր գիտնական, հայագետ, Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի Մ. Ս. Գրուշեւսկու անվան ուկրաինական հնագրագիտության եւ աղբյուրագիտության ինստիտուտի Լվովի բաժանմունքի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յարոսլավ Ռոմանովիչ Դաշկեւիչը: Նրա բազմաթիվ աշխատությունները, մենագրությունները, հոդվածները, հրապարակումները նվիրված են Ուկրաինայի պատմության քիչ ուսումնասիրված կամ անհայտ մնացած էջերին, հարեւան երկրների ու ժողովուրդների հետ Ուկրաինայի ունեցած քաղաքական, տնտեսական ու մշակութային հարաբերություններին: Նա վիթխարի աշխատանք է տարել ուկրաինական պատմագիտության, աղբյուրագիտության, կնիքագիտության, մատենագիտության, քարտեզագիտության, պատմական աշխարհագրության, հնագրագիտության, դիպլոմատիկայի, հարեւան երկրների եւ ժողովուրդների հետ ուկրաինացիների ունեցած դարավոր հարաբերությունների հետազոտման ասպարեզում:**

**Հատկապես մեծ է նրա վաստակը Ուկրաինայում եւ Լեհաստանում հաստատված հայ գաղութների պատմության ուսումնասիրման գործում: Զնայած խանգարիչ շատ հանգամանքների՝ նա կարողացել է հրատարակել ավելի քան 1.500 գիտական հոդվածներ, մենագրություններ, գրախոսություններ, սկզբնաղբյուրների ժողովածուներ եւ այլ գործեր: Նա տիրապետում էր մի քանի օտար լեզուների եւ իր աշխատությունների մի զգալի մասը շարադրել է ուկրաիներեն, ռուսերեն, լեհերեն եւ ֆրանսերեն լեզուներով:**

**Համագործակցելով Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի եւ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտնականների հետ՝ Յա. Դաշկեւիչն իր աշխատություններում հիմնավորապես անդրադարձել է հայ գաղութների պատմության կնճռոտ շատ խնդիրների եւ իր հեղինակավոր խոսքն ասել դրանց մասին:**

**Յա. Դաշկեւիչը ծնվել է Լվովում 1926 թ. դեկտեմբերի 13-ին: Նրա հայրը՝ Ռոման Դաշկեւիչը, սերում էր հին ուկրաինական ազնվական ընտանիքից, Ուկրաինայի ազգային բանակի գեներալ-լեյտենանտ էր: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նա արտագաղթել եւ մինչեւ կյանքի վերջն ապրել է Ավստրիայում: Մայրը Ուկրաինայում ճանաչված ազգային-զինվորական գործիչ էր, որը հետագայում զբաղվում էր գիտական աշխատանքով: Հրատարակել է 75 գիտական աշխատություն: 1949 թ. նա ձերբակալվել եւ մինչեւ 1956 թ. գտնվել է կալանավայրերում: Հետագայում նա լիովին արդարացվել է:**

**Յա. Դաշկեւիչը 1949 թ. գերազանցությամբ ավարտել է Լվովի համալսարանի բանասիրական ֆակուլտետը եւ աշխատանքի անցել Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի գրադարանի ձեռագրերի բաժնում, բայց շատ չանցած նրան նույնպես ձերբակալում են եւ ՍՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի հեռակա որոշմամբ դատապարտում 10 տարվա ազատազրկման: Նա կալանքի մեջ է եղել շուրջ 6 տարի: Ազատվելուց հետո տաղանդավոր, ստեղծագործական ուժերով եւ մեծ հնարավորություններով լեցուն Յա. Դաշկեւիչը երկար տարիներ գործազուրկ է եղել եւ գտնվել պետական անվտանգության օրգանների մշտական հսկողության տակ: Եվ դա շարունակվել է մինչեւ 1969 թ.: Նրա կյանքի այդ ծանր ժամանակաշրջանում Հայաստանի գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը եւ Մաշտոցի անվան Մատենադարանը հատուկ ուշադրության են արժանացրել նրան: Պատմության ինստիտուտը, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ, լույս է ընծայել «Ուկրաինայի հայկական գաղութները XV-XIX դարերի սկզբնաղբյուրների եւ գրականության մեջ» նրա մեծարժեք մենագրությունը:**

**Այդ թեմայով նրա թեկնածուական դիսերտացիան պաշտպանության է դրվել Պատմության ինստիտուտի գիտական խորհրդում: Յա. Դաշկեւիչի նկատմամբ բացառիկ վերաբերմունք ուներ Մատենադարանի հանգուցյալ տնօրեն ակադեմիկոս Լեւոն Խաչիկյանը: «Բանբեր Մատենադարանի» էջերում նա մեկը մյուսի ետեւից հրատարակել է Յա. Դաշկեւիչի արժեքավոր աշխատությունները հայ եւ ուկրաինական դարավոր կապերի մասին: Դրանց թվում էր նաեւ նրա ընդարձակ հոդվածը հայատառ-ղփչաղերեն գրված մեծաքանակ նյութերի հեղինակների ազգային պատկանելության մասին: Կիեւցի մի երիտասարդ գիտաշխատակից, ձգտելով դուր գալ իր ղազախ կնոջ ազգականներին՝ փորձում էր ղփչաղախոս դարձած լեհահայերին դուրս բերել որպես հայերի կողմից քրիստոնյա դարձված ղփչաղներ (պոլովցիներ) եւ դարերի ընթացքում նրանց ստեղծած գրական ու գիտական վաստակը վերագրել ղազախների նախնիներ հռչակված այդ ղփչաղներին: Յա. Դաշկեւիչը գիտության հետ առնչություն չունեցող այդ «տեսության» դեմ հանդես եկավ մի աշխատությամբ, որով հիմնավորապես հերքեց պատմական իրողությունը խեղաթյուրող այդ վայ «տեսաբանի» մտքի վարժանքները. այնպես որ վերջինս հարկադրված եղավ հրաժարվել դրանցից:**




**1995 թ. Յա. Դաշկեւիչը պաշտոնապես արդարացվել է 1991 թ. ընդունված «Ուկրաինայում քաղաքական հալածանքների զոհերի արդարացման մասին» օրենքի հիման վրա: Իր աշխատությունները հրատարակելու համար գիտնականը հարկադրված է եղել օգտագործել ավելի քան 20 ծածկանուններ:**

**Յա. Դաշկեւիչն ի թիվս այլ արժեքավոր հայագիտական աշխատությունների՝ Նյու Յորքում եւ Լվովում լույս է ընծայել «Հայաստանը եւ Ուկրաինան» երկհատորանի գիրքը՝ անգլերեն լեզվով: Նրա վաստակը մեծ է հայ-ուկրաինական գիտական համագործակցության ասպարեզում, եւ այդ պատճառով նա վայելում էր հայ գիտական հասարակայնության բացառիկ հարգանքը: 2001 թ. նրան շնորհվել էր Ուկրաինայի գիտության վաստակավոր գործչի կոչում: Նա Լվովի պատվավոր քաղաքացի էր: Մինչ այդ նա պարգեւատրվել էր Ս. Սահակ եւ Ս. Մաշտոց շքանշանով, ընտրվել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր Յա. Դաշկեւիչին շնորհվել էր նաեւ Երեւանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան:**

**Յա. Դաշկեւիչը ընտրվել էր Ուկրաինական ազատ ակադեմիայի (ԱՄՆ) պատվո անդամ: Նրա մահը մեծ կորուստ է ոչ միայն ուկրաինագիտության, այլեւ հայագիտության համար:**

ՎԱՐԴԱՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

# Մի շարք ոլորտներում հայերենը սկսել է մահանալ

**Երեկ «Հենարան» ակումբում՝ ասուլիսի ժամանակ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Սաքապետոյանը խոսեց վտանգված մայրենիի ու լեզվակառավարման ապարդյուն փորձերի վերաբերյալ:**

**«Ամենից շատ վտանգված է բանավոր խոսքը՝ հատկապես ռադիոհեռուստատեսության: Օտարաբանություններն արդեն աղճատում են մայրենիի կառույցը: Ամենամեծ ցավը ա-երով խոսելն է, այսինքն՝ օժանդակ բայի 3-րդ դեմքի է-ի փոխարեն, ասվում է ա, օրինակ՝ գնում ա: Երբ այդպես խոսում է ինչ-որ մեկը փողոցում, դա դեռ ոչինչ, բայց երբ այդ բանն անում են մարդիկ, որոնք կոչված են հաղորդավար կամ հաղորդման հեղինակ լինելու, ապա սա արդեն մտածելու տեղիք է տալիս», ասում է Ռուբեն Սաքապետոյանը:**

**Մայրենին հատկապես վտանգված է, այնինչ լեզվի պաշտպանությունն ամեն ազգի համար նաեւ ազգային անվտանգության խնդիր է:**




**Բանախոսի կարծիքով՝ ժամանակին Լեզվի պետական տեսչության հետ հաշվի էին նստում, որովհետեւ այն գործում էր կառավարությանն առընթեր, բայց երբ դարձավ կրթության ու գիտության նախարարության մի ստորաբաժանումը, արդեն նրան հաշվի առնող չեղավ:**

**«Լեզվի պետական տեսչության աշխատանքն ինձ ավելի շատ հիշեցնում էր պետավտոտեսչության գործելակերպը: Խախտողին բռնում, տուգանում էին, բայց դա ընդունելի ձեւ չէ: Քանի որ խախտողը մեծ գումար է ծախսում ինչ-որ գովազդային վահանակ կանգնեցնելու համար, հետեւաբար տալիս է նաեւ 5-10 հազար դրամի տուգանքն ու այդպես էլ չի ուղղում իր խախտումը,- ասաց Ռուբեն Սաքապետոյանը,- զավեշտալի է մեր հայկական մտածելակերպը. մի փոքր խցիկ կամ հավաբուն ունեցողը վրան անպայման պետք է գրի shop, top, սա մեր չտեսության դրսեւորումներից մեկն է»:**

**Բանախոսը նշում է, որ Երեւանում քայլելիս զարմանում է, թե որտեղ է ինքը՝ հայկական քաղաքում, թե արաբական կամ աֆրիկյան մի էկզոտիկ երկրում:**

**Մայրենիի միջազգային օրը՝ փետրվարի 20-ը, Ռուբեն Սաքապետոյանը համարեց մի ձեւական բան՝ նմանեցնելով այն ձկնորսի օրվա կամ թռչնի օրվա հետ:**

**«Լեզվի հանդեպ պետք է լինի ամենօրյա հոգածություն: Մայրենիի մաքրության համար պայքարը պետք է սկսենք դպրոցներից, պետք է նորմալ անցնենք բոլոր ժամանակները», ասում է բանասերը:**

**Մի շարք ոլորտներում հայերենը սկսել է մահանալ: Ինքնաթիռաշինության, երկաթուղային տրանսպորտի, ատոմային ֆիզիկայի, արդի կենսաքիմիայի ոլորտներում ատենախոսություններն այլեւս հայերենով չեն գրվում, դասախոսությունները չեն ընթերցվում հայերենով: Որեւէ բուհ չունի պոլիգրաֆիական գործի բաժին, պոլիգրաֆիստները սովորում են այլ երկրներում, հետեւաբար այս ոլորտում չի զարգանում հայերեն տերմինաբանությունը:**

**ՅՈՒՆԵՍԿՕ-ի լեզվական քարտեզ կազմող փորձագետները կանխատեսում են, որ 21-րդ դարի վերջին տիրապետող լեզուները կարող են մի շարք լեզուներ ընդհանրապես կիրառությունից դուրս հանել:**

**«Այդ կանխատեսմանը ես վերաբերում եմ միայն հումորով: Արդեն 1600 տարի է լսում ենք, որ գուժում են հայոց լեզվի ու հայ ազգի մահը, սակայն այսօր հայոց լեզուն իր տարածվածությամբ ու խոսողների քանակով աշխարհի լեզուների շարքում զբաղեցնում է 38-րդ տեղը», վերջում հավելեց Ռուբեն Սաքապետոյանը:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 18/03/2010 22:39 Page 1



# Հակոբյանը նպաստեց Նեպոմնյաչչու չեմպիոնությանը

Խորվաթիայի Ռիեկա քաղաքում ավարտվեցին շախմատի Եվրոպայի տղամարդկանց եւ կանանց անհատական առաջնությունները, որոնցում բացի մեդալներից, խաղարկվում էին նաեւ աշխարհի գավաթի խաղարկության ուղեգրերը:

Տղամարդկանց մրցաշարի ավարտական տուրում ուշադրության կենտրոնում էր Վլադիմիր Հակոբյանի եւ ռուսաստանցի 19-ամյա գրոսմայստեր Յան Նեպոմնյաչչու մրցավեճը: Վերջինս կես միավորով գերազանցում էր Հակոբյանին: Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի բախտը պետք է վճռեր այդ պարտիան: Հաղթանակի դեպքում հայ շախմատիստը հնարավորություն կունենար Բայադուր Ջոբավայի եւ Արտյոմ Տիմոֆեեւի հետ լրացուցիչ մրցավեճում վիճարկելու Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Սակայն ցավոք Հակոբյանը սեւերով պարտվեց ու զրկվեց մեդալների համար պայքարելու հնարավորությունից:

Հաղթանակը Յան Նեպոմնյաչչուն չեմպիոն հռչակեց: Նա վաստակեց 9 միավոր եւ անհասանելի դարձավ մրցակիցների համար: 2656 գործակից ունեցող 19-ամյա շախմատիստը 11 հանդիպումներում անպարտելի մնաց՝ տոնելով 7 հաղթանակ, 4 պարտիա ավարտելով ոչ-ոքի: Հետաքրքրական է, որ Նեպոմնյաչչին ժամանակին Եվրոպայի չեմպիոն է հռչակվել մինչեւ 10 եւ մինչեւ 12 տարեկանների մրցաշարերում, իսկ 14 տարեկանում նվաճել է Ռուսաստանի պատանիների չեմպիոնի տիտղոսը:

Հաղթողից կես միավորով հետ մնացին վրացի գրոսմայստեր Բայադուր Ջոբավան եւ ռուսաստանցի



Արտյոմ Տիմոֆեեւը: Ջոբավան հաղթեց ռուսաստանցի Դենիս Խիսմատուլինին, իսկ Տիմոֆեեւը պարտության մատնեց ադրբեջանցի Ռաուֆ Մամեդովին: Արծաթե եւ բրոնզե մեդալակիրներին որոշելու համար Ջոբավան արագ շախմատի մրցախաղ կանցկացնի Տիմոֆեեւի հետ:

Տղամարդկանց մրցաշարում հայ շախմատիստներից բոլորից հաջող հանդես եկավ Արման Փաշիկյանը: Նա շատ հաջող անցկացրեց մրցաշարի 2-րդ կեսը: Վերջնագծում Արմանը 5 անընդմեջ հաղթանակ տոնեց: Վերջին տուրում Փաշիկյանը պարտության մատնեց շվեդ Էմանուել Բերգին եւ վաստակելով 8 միավոր, լրացուցիչ գործակիցները հաշվի առնելով, զբաղեցրեց 10-րդ տեղը:

7,5 միավոր վաստակեցին Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը: Հակոբյանն ավարտական տուրում միակ պարտությունը կրեց, ինչը նրա համար ճակատագրական եղավ: Վերջին 4 տուրերում հաջող խաղաց Գաբրիել Սարգսյանը՝ վաստակելով 3,5 միավոր: Ավարտական տուրում նա հաղթեց ռուսաստանցի Եվգենի Ռոմանովին: Ռոբերտ Հովհաննիսյանն էլ պարտության մատնեց ուկրաինացի Միխայլո Օլեքսիենկոյին: Մեր մյուս շախմատիստների արդյունքները հետեւյալն են. Ավետիք Գրիգորյան՝ 7, Տիգրան Պետրոսյան, Հրանտ Մելքումյան՝ 6,5-ական, Զավեն Անդրեասյան, Արտաշես Մինասյան, Սամվել Տեր-Սահակյան, Դավիթ Պետրոսյան՝ 6-ական, Վահե Բաղդասարյան՝ 5, Վլադիմիր Պողոսյան՝ 4,5:

Կանանց մրցաշարի հաղթողը որոշվեց Պիա Կրամլինգի ու Վիկտորյա Չմիլիտեի մրցավեճում: Հաջողությունն ուղեկցեց Կրամլինգին, որը հաղթելով մրցակցուհուն, վաստակեց 9 միավոր: Չմիլիտեն 8,5 միավորով դարձավ արծաթե մրցանակակիր, իսկ բրոնզե մեդալի համար լրացուցիչ մրցախաղ կանցկացվի:

Հայ շախմատիստուհիներից լավագույն արդյունքի հասան Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Գալոյանը, որոնք վաստակեցին 6,5-ական միավոր: Էլինան հաղթեց Լիզա Շուտին, իսկ Լիլիթը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց՝ զիջելով Մարիա Մուզիչուկին: Գալոյանը զբաղեցրեց 29-րդ տեղը, իսկ Դանիելյանը հանգրվանեց 35-րդ հորիզոնականում:

6-ական միավոր վաստակեցին Լիլիթ Մկրտչյանն ու Նելլի Աղինյանը: Լիլիթը պարտվեց վրացի Սոֆիկո Գվեթաձեին, իսկ Նելլին հաղթեց Եկատերինա Ֆախիրիդոուին: Անահիտ Խառատյանը հաղթելով Անդրեա Ստարցեւիչին, վաստակեց 4 միավոր:

# «Բարսելոնը» ջախջախեց «Շտուտգարտին»

**Հայտնի դարձան չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչի վերջին երկու մասնակիցները: Իսպանական «Բարսելոնը» սեփական հարկի տակ 4-0 հաշվով ջախջախեց «Շտուտգարտին»: Հաշիվը կարող էր ավելի խոշոր լինել, եթե «Բարսելոնն» իրացներ գոլային պահերի գոնե մի մասը: Արդյունավետությամբ աչքի ընկավ Լիոնել Մեսին՝ խփելով 2 գնդակ: Գոլերի հեղինակներ դարձան նաեւ Պեդրոն ու Կրկիչը:**

**Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:**

**Խոսեպ Գվարդիոլա** («Բարսելոն»)-Մենք ամբողջ խաղադաշտով ագրեսիվ խաղ ցուցադրեցինք եւ մրցակցին շունչ քաշելու հնարավորություն չտվեցինք: «Վալենսիայի» հետ խաղում շատ գոհ էի Թյերի Անրիից: Այսօր նա իրեն վատ չդրսեւորեց դաշտի կենտրոնական հատվածում, սակայն կցանկանայի նրան տեսնել ավելի ագրեսիվ գործելիս մրցակցի տուգանային հրապարակի մատույցներում: Ինչ վերաբերում է Մեսիին, ապա նա լավագույնն էր: Քառորդ եզրափակիչում բոլոր թիմերն էլ ուժեղ են: Հարկավոր է երկու խաղերում էլ հիանալի խաղ ցուցադրել, որպեսզի հաջորդ փուլ մտնես:

**Քրիստիան Գրոս** («Շտուտգարտ»)-Զբավականացրեց խիզախությունը, որը մեզ շատ օգնեց երեք շաբաթ առաջ: Եթե պաշտպանությունում մի փոքր ավելի հուսալի խաղայինք, հնարավոր կլիներ վնասազերծել մրցակցի կիսապաշտպաններին: Այդ ժամանակ մենք հնարավորություն կունենայինք այլ արդյունք ակնկալելու: «Բարսելոնը» շատ ուժեղ մրցակից է եւ հենց խաղասկզբից ճնշում գործադրեց մեր վրա: Իսկ Մեսին շատ տաղանդավոր է, նրան կարելի է համեմատել Մարադոնայի հետ:

**Ֆրանսիայի չեմպիոն «Բորդոն» դժվարին պայքարում 2-1 հաշվով պարտության մատնեց հունական «Օլիմ-**



**պիակոսին» ու մտավ քառորդ եզրափակիչ: Արդեն 5-րդ րոպեին Գուրկյուֆն առաջ մղեց ֆրանսիացիներին: 65-րդ րոպեին Միտրօղլուն վերականգնեց հավասարակշռությունը, սակայն խաղավարտից 2 րոպե առաջ Շամախը խփեց հաղթական գնդակը:**

**Մարզիչների կարծիքն այսպիսին է.**

**Լորան Բլան** («Բորդո»)-Շատ լավ սկսեցինք խաղը, արագ գոլ խփեցինք, մի քանի գոլային պահեր էլ չիրացրինք: 2-րդ խաղակեսում հանդիպման բնույթը փոխվեց: Բավարարված եմ արդյունքով, ֆուտբոլիստները լավ աշխատեցին: Չէի ցանկանա հաջորդ փուլում հանդիպել «Լիոնի» հետ: Իսկ ամենաշատը չէի ցանկանա, որ քառորդ եզրափակիչում մրցակիցը լինի «Բարսելոնը»:

**Բոժիդար Բանդովիչ** («Օլիմպիակոս»)-Շնորհավորում եմ «Բորդոյին», որն այսօր շատ լավ խաղաց: Արագ գոլ բաց թողեցինք, բայց թեւաթափ չեղանք: Կարծում եմ, երկրորդ խաղակեսում մեր խաղն ավելի դիտարժան էր: Պետք է շնորհակալություն հայտնեմ ֆուտբոլիստներին: Եթե նրանք մի փոքր ավելի հավատային սեփական ուժերին, ամեն ինչ այլ կերպ կլիներ:

# Եթովպիացի մարզուհին որակազրկվել է

Թեթեւ աթլետիկայի Եթովպիայի ֆեդերացիան երկու տարով որակազրկել է երկրի լավագույն թեթեւաթլետուհիներից մեկին՝ 29-ամյա Շեւտայե Գեմեչուին: Վերջին 6 տարում նա եթովպիացի երրորդ մարզուհին է, որ արգելված խթանիչների օգտագործման համար պատժվում է:

Անցյալ տարվա սեպտեմբերի 27-ին Գեմեչուն հաղթող էր ճանաչվել Լյուքսեմբուրգի կիսամարաթոնյան վազքում: Մրցումներից հետո նրանից վերցված անալիզներում էրիտրոպոետին էր հայտնաբերվել: Մարզուհին կտրականապես հերքել էր արգելված խթանիչներ օգտագործելու փաստը. «Լյուքսեմբուրգի կիսամարաթոնյան վազքի մրցումների մրցանակային հիմնադրամն ընդամենը 1000 եվրո էր, որի համար իմաստ չուներ դոպինգ ընդունել: Ես մրցումներին մասնակցեցի միայն այն պատճառով, որպեսզի ստուգեմ պատրաստվածության աստիճանս»:

Եթովպիացի մարզուհին մասնակցել է Սիդնեյում եւ Աթենքում կայացած օլիմպիական խաղերին, 3 անգամ անընդմեջ դարձել է Արիզոնայի մարաթոնյան վազքի հաղթող: Նրա որակազրկման ժամկետը լրանում է 2012-ի փետրվարին, սակայն Եթովպիայի թեթեւ աթլետիկայի ֆեդերացիան մտադիր է լրացուցիչ պատժամիջոցներ կիրառել մարզուհու նկատմամբ: Այդ դեպքում Շեւտայե Գեմեչուն կարող է զրկվել Լոնդոնի օլիմպիադայի մասնակցությունից: Եթե նա հանդես գա Լոնդոնում, ապա կդառնա մարաթոնյան վազքի եթովպիացի առաջին մարզուհին, ով կմասնակցի օլիմպիական երեք խաղերի:

ՎՃԻՌ

# Բռնցքամարտիկները կմեկնեն Բաքու, ըմբիշները՝ ոչ

**Հայաստանի օլիմպիական կոմիտեի մամուլի քարտուղարության տեղեկացմամբ, ՀՀ ըմբշամարտի ազգային հավաքականը չի մասնակցի ապրիլի 13-18-ը Բաքվում կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Պատճառն այն է, որ Եվրոպայի առաջնությունը վարկանիշային չէ: Իսկ ահա Մոսկվայում կայանալիք աշխարհի առաջնությանը հայ ըմբիշները կմասնակցեն, քանի որ այն 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերի համար վարկանիշային է: Փետրվարին Հայաստանի հունահռոմեական ըմբշամարտի հավաքականը 3-րդ տեղը գրավեց Երեւանում կայացած աշխարհի գավաթի խաղարկությունում եւ այժմ նախապատրաստվում է աշխարհի առաջնությանը:**

**Ինչ վերաբերում է Հայաստանի բռնցքամարտի պատանեկան հավաքականին, ապա մեր ընտրանին կմասնակցի ապրիլի 23-ից մայիսի 1-ը Բաքվում կայանալիք աշխարհի պատանեկան առաջնությանը: Այդ մրցաշարը վարկանիշային է: Այնտեղ խաղարկվելու են օգոստոսին Սինգապուրում կայանալիք պատանեկան առաջին օլիմպիական խաղերի ուղեգրեր:**

# Գողացվել է օլիմպիական առաջին խաղերի մեդալը

**Տոկիոյի սպորտի թանգարանից գողացվել է 1896-ին Աթենքում կայացած ժամանակակից օլիմպիական առաջին խաղերի ոսկե մեդալը: Այն պատկանում էր գերմանացի մարմնամարզիկ Գերման Վայնգերտներին: 1964-ին Տոկիոյում կայացած օլիմպիական խաղերի ժամանակ մարմնամարզիկի որդին մեդալը հանձնել էր կազմկոմիտեին՝ խնդրելով դրանով պարգեւատրել լավագույն մարմնամարզիկ Յուկիո Էնդոյին: Հենց վերջինս էլ մեդալը հետագայում հանձնել էր սպորտի թանգարան:**

**1896-ի օլիմպիական խաղերի ոսկե մեդալը պատրաստված էր ոչ թե ոսկուց, այլ արծաթից: Մեդալի տրամագիծը 48,9 միլիմետր է, հաստությունը՝ 3,8 միլիմետր, քաշը՝ 68 գրամ: Թանգարանում մեդալը գտնվում էր ապակե տարայի մեջ: Թանգարանում տեսախցիկներ տեղադրված չեն, ինչը զգալիորեն դժվարացնում է ոստիկանության գործը: Թանգարանի տնօրենությունը խնդրել է առեւանգիչներին հետ վերադարձնել պատմական արժեք ներկայացնող մեդալը:**

# Ամերիկացիները կզրկվեն պարգեւներից

**Թեթեւ աթլետիկայի միջազգային ֆեդերացիան դիմել է ՄՕԿ-ին ԱՄՆ-ի կանանց հավաքականին զրկելու 4x400 մետր փոխանցումավազքում Աթենքի օլիմպիադայում նվաճած ոսկե մեդալներից: Պատճառը թիմի անդամներից մեկի՝ Կրիստալ Կոքսի դոպինգ օգտագործելու փաստի առկայությունն է, որի համար ԱՄՆ-ի հակադոպինգային գործակալությունը մարզուհուն հունվարին 4 տարով որակազրկել է: Վերջինիս ցույց տված արդյունքները 2001-2004-ի ժամանակահատվածում չեղյալ են համարվել:**

**Այսպիսով, ԱՄՆ-ի հավաքականի նվաճած ոսկե մեդալները պետք է հանձնվեն ՌԴ հավաքականին, որն Աթենքում 2-րդ տեղն էր գրավել: Ռուսների կազմում հանդես էին եկել Օլեսյա Կրասնոմովեցը, Նատալյա Նազարովան, Օլեսյա Զիկինան եւ Նատալյա Անտյուխը: Իսկ ռուսների նվաճած արծաթե մեդալները կհանձնվեն Ճամայկայի մարզուհիներին: Մեծ Բրիտանիայի հավաքականն էլ կպարգեւատրվի բրոնզե մեդալներով:**

# Մերիոն Ջոնսը կխաղա բասկետբոլի թիմում

Ամերիկացի համրահայտ թեթեւաթլետուհի Մերիոն Ջոնսը պայմանագիր է կնքել ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության «Տուլզա Շոկ» թիմի հետ: 2000-ի Սիդնեյի օլիմպիական խաղերում Մերիոն Ջոնսը 3 ոսկե մեդալ էր նվաճել: Սակայն հետագայում պարզվեց, որ մարզուհին արգելված խթանիչներ է օգտագործել, որի համար որակազրկվեց ու զրկվեց նվաճած մեդալներից: Սպորտից չկտրվելու համար Մերիոն Ջոնսը որոշեց զբաղվել բասկետբոլով:

# Բեքհեմի երազանքը մնաց անկատար

**Ֆուտբոլի աշխարհի առաջնությանը մասնակցելու Դեւիդ Բեքհեմի երազանքը մնաց անկատար: Այդ նպատակով նա արդեն 2-րդ մրցաշրջանն է, ինչ հունվարից հանդես է գալիս իտալական «Միլանում»: Սակայն «Կյեւոյի» հետ առաջնության խաղում ստացած ծանր վնասվածքը զրկեց Բեքհեմին ամռանը կայանալիք աշխարհի առաջնությանը մասնակցելու հնարավորությունից:**



**Բեքհեմը Ֆինլանդիայում վիրահատության է ենթարկվել, որից հետո բուժող բժիշկ Սակարի Օրավան հայտարարել է, որ Դեւիդը մինչեւ հունիս չի կարող վերականգնվել: Նա կարող է քայլել միայն երեք ամիս անց:**

**Բայց ամեն դեպքում Բեքհեմը հնարավորություն կունենա մեկնելու Հարավաֆրիկյան Հանրապետություն՝ ներկա գտնվելու համաշխարհային ֆուտբոլի տոնակատարությանը: Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելլոն նրան առաջարկել է տեղ զբաղեցնել մարզչական կազմում:**

**«Ես խոսել եմ նրա հետ «Կյեւոյի» հետ հանդիպումից հետո, որպեսզի իմ աջակցությունը հայտնեմ: Դեւիդը մեծ պրոֆեսիոնալ է եւ շատ էր աշխատում, որպեսզի պատրաստ լինի աշխարհի առաջնությանը: Մրցաշարը բաց թողնելը Բեքհեմի համար մեծ հարված կլինի», նշել է Ֆաբիո Կապելլոն:**

**«Ես տեսել եմ Բեքհեմին խաղից հետո: Նա տանջվում ու արտասվում էր: Գրկեցի նրան եւ ասացի, որ եթե ցանկանում է, կարող է մեզ մոտ մնալ նաեւ հաջորդ տարի», հայտարարել է «Միլանի» փոխնախագահ Ադրիանո Գալիանին:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 18/03/2010 23:08 Page 1



# Ծանուցում

## Հանդիպում ՎԶԵԲ-ի նախագահ Թոմաս Միրոուի գլխավորած պատվիրակության հետ

Այսօր Կենտրոնական բանկի նախագահը եւ խորհուրդը հանդիպեցին Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ) նախագահ Թոմաս Միրոուի գլխավորած պատվիրակության անդամների հետ:

Ողջունելով հյուրերին, ԿԲ նախագահ **Արթուր Ջավադյանը** նշեց, որ ՎԶԵԲ-ը Հայաստանի լավագույն գործընկերներից է եւ անգնահատելի ներդրում ունի երկրի ֆինանսական հատվածի զարգացման գործում:

Ներկայացնելով Հայաստանի ֆինանսական համակարգը, նախագահը շեշտեց, որ գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջին օրից առ այսօր ՀՀ կառավարությունը կամ Կենտրոնական բանկը որեւէ առեւտրային բանկի որեւէ ֆինանսական աջակցություն չեն ցուցաբերել: Իրականացվել են վարկային ծրագրեր, եւ խիստ վերահսկողության շնորհիվ համակարգին հաջողվել է խուսափել ցնցումներից, բանկերը ներկայումս գերիրացվելի են եւ գերկապիտալացված:

Արթուր Ջավադյանն ասաց, որ համակարգի կայունությանը նպաստել են նաեւ մի շարք ինստիտուցիոնալ բարեփոխումներ` մասնավորապես, կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումը, ներքին աուդիտի դերի ուժեղացումը, ավանդների երաշխավորման հիմնադրամի ստեղծումը, վարկային ռեգիստրի եւ վարկային բյուրոյի ստեղծումը, ինչպես նաեւ ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտի ձեւավորումը: Նա նշեց, որ դեռեւս շատ անելիքներ կան ֆինանսական շուկաների զարգացման ոլորտում: Նախագահը հույս հայտնեց, որ ՎԶԵԲ-ի օգնությամբ կհաջողվեն իրականացնել ծրագրեր, որոնք առավել կնպաստեն ֆինանսական համակարգի կայունությանը:

ՎԶԵԲ նախագահ **Թոմաս Միրոուն** շնորհակալություն հայտնեց բանկի երեւանյան ներկայացուցչությանն աջակցելու համար եւ նշեց, որ երկրում ֆինանսական կայունության պահպանման գործում Կենտրոնական բանկը կատարել է որոշիչ դեր: Նա հավաստիացրեց, որ բանկը շարունակաբար աջակցելու է տարբեր վարկային ծրագրերին, մասնավորապես, փոքր եւ միջին ձեռնարկությունների վարկավորման ոլորտում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին այս տարվա ընթացքում Հայաստանի ֆինանսական հատվածի շուրջ 50 մլն դոլարի չափով վարկավորման ծրագրեր եւ ֆինանսական շուկայի հետագա զարգացման նոր հնարավորություններ:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

---

Ակսոն ապրանքա-հումքային Բորսայի հարթակում ս.թ. մարտի 22-ին այնուհետ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 11.00-17.00 իրականացվելու է կից ներկայացված ՀԿԵ ՓԲԸ-ին պատկանող գույքի աճուրդային վաճառքը դասական եղանակով` մեկ միասնական համալիրով.

1.Նեղ ուղղու սայլակներ (կոմպլեկտավորված երկու նեղ ուղղու անիվների զույգերով 1435մմ` վռանային նստեցվածքով) 341 հատ,

2.Նեղ ուղղու սայլակներ (առանց ուղղու անիվների) 11 հատ,

3.Նեղ ուղղու անիվների զույգեր 1435մմ վռանային նստեցվածքով: 1 հատ:

Համալիրի մեկնարկային գինը 99242000 ՀՀ դրամ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել www.akson.am կամ զանգահարել (010) 564513 հեռախոսահամարով:

На площадке Товарно-сырьевой Биржи "Аксон" с 22.03.2010г. и в дальнейшем в каждые рабочие дни с 11.00-17.00 пройдут аукционы классическим методом ниже представленного имущества, принадлежащего ЗАО "ЮКЖД"- единым комплексом:

1.Тележка узкой колеи ЦНИИ ХЗ (укомплектованная двумя колесными парами узкой колеи 1435мм на втулочной посадке) 341 шт

2.Тележка узкой колеи ЦНИИ ХЗ (без колесных пар) 11 шт

3.Колесная пара узкой колеи 1435мм на втулочной посадке 1 шт

Стартовая цена комплекса 99242000 драм.

Для дополнительной информации посетить www.akson.am или звонить по телефону (010) 564513

---

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
### «ԴԱՐ» տարածաշրջանային զարգացման եւ մրցունակության հիմնադրամի 2009 թ. գործունեության մասին

1. «ԴԱՐ» տարածաշրջանային զարգացման եւ մրցունակության հիմնադրամ:
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «13» մարտի 2006 թ. պետական գրանցման վկայական` 03Ա071518:
3. Հիմնադրամի գտնվելու վայրը` Երեւան, Հյուսիսային պողոտա 1-29, հեռ 51-85-00:
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը`
Սուրիկ Գրիգորյան- աշխատավարձի ձեւով:
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները`
Սվետլանա Հակոբյան- չի օգտվում
Արսեն Աղաջանյան- չի օգտվում
Կարեն Աղաջանյան- չի օգտվում
Հրաչյա Աղաջանյան- չի օգտվում
Արթուր Շահնազարյան- չի օգտվում
Լեւոն Էսկենյան- չի օգտվում
6. Աշխատակազմը`
Ժանետա Մելքոնյան- աշխատավարձի ձեւով
Սոնա Սումբատյան- աշխատավարձի ձեւով
Դավիթ Գրիգորյան- աշխատավարձի ձեւով
Սեյրան Սարոյան- աշխատավարձի ձեւով
7. Իրականացված ծրագրերը`
1. «Սասունցի Դավիթ» էպոսի բեմադրության նախապատրաստական աշխատանքների իրականացում:
2. Ֆինանսական օգնություն «ՎԷՄ» ռադիոկայանին:
3. Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտների հետ արեւելյան մարզաձեւերի պարապմունքների անցկացումը:
8. Ֆինանսավորման աղբյուրը`
1. «ԱԴԱ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն-նվիրաբերություն, 27854,0 հազ. դրամ:
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը` 31953,0 հազ. դրամ:
10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը չափը` 28441,0 հազ. դրամ:
11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը կցվում է:

Հաստատված [illegible] հոգաբարձուների խորհրդի կողմից` 04.02.2010թ
Գործադիր տնօրեն Ս. Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ Ժ. Մելքոնյան

«ՍԱԹԵՆ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ՀՀ ք. Երեւան, Դրոյի 23, բն. 20, հեռ. 28-18-59
«01» մարտի 2010 թ.

*Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա թիվ ԱԾ N 027 տրված ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից*

«Դար» տարածաշրջանային զարգացման եւ մրցունակության հիմնադրամի 2009 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների փաթեթի վերաբերյալ

### ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դար» տարածաշրջանային
զարգացման եւ մրցունակության հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի անդամներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դար» տարածաշրջանային զարգացման եւ մրցունակության հիմնադրամի հաշվապահական հաշվեկշիռը առ 1-ը հունվարի 2010 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի մասին հաշվետվությունները եւ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք` ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության եւ բացահայտումների հիմքերի հետազոտումը թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի առ 1-ը հունվարի 2010 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական հոսքերի մասին բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացված` համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման չափանիշներին համապատասխան:

«Սաթեն աուդիտ» ՍՊԸ
Տնօրեն
Պատասխանատու
աուդիտոր

Գ. Վարդանյան

---

### Հաշվետվություն

Հրայր եւ Աննա Հովնանյաններ Ֆաունդեյշն Կորպորացիայի Հայաստանի Մասնաճյուղի 2009 թ. գործունեության մասին

1. Ընդհանուր տեղեկություններ մասնաճյուղի մասին.

1.1 գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 31.01.2006 թ. պետական գրանցման համար 21106003755:

1.2 գտնվելու վայրը` ք. Երեւան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ 01555988:

1.3 կապի միջոցները` հեռ. 529418,

1.4 Մասնաճյուղի տնօրեն` Ա. Պողոսյան:

2. Իրականացված ծրագրերը` 2009 թ. ընթացքում մասնաճյուղը ծրագրեր չի իրականացրել, եկամուտներ չի ստացել:

Մասնաճյուղի տնօրեն Հ. Երևան Ա. Պողոսյան

Հրայր և Աննա Հովնանյան Ֆաունդեյշն Կորպորացիայի Մասնաճյուղ RA, Yerevan The Hirair and Anna Hovnanian Foundation Branch 01555988

---

### Հատուկ հրավեր Հայաստանի գործարար ոլորտի ղեկավարներին` մասնակցելու մարտի 24-ին կայանալիք «Ազնիվ կորպորատիվ համակարգի ամրապնդում» թեմայով համաժողովին

USAID FROM THE AMERICAN PEOPLE
MOBILIZING ACTION AGAINST CORRUPTION

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը (ՀԳՄԾ), ՀՀ էկոնոմիկայի նախարարության եւ ԱՄՆ ՄԶԳ Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում ծրագրի հետ համատեղ, պատիվ ունի հրավիրելու մասնավոր ոլորտի, կառավարության, զարգացման գործակալությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին` մասնակցելու «Ազնիվ կորպորատիվ համակարգի ամրապնդում» թեմայով համաժողովին:

Համաժողովին ներկա կլինեն Միջազգային առեւտրային պալատի/Փարիզ, Վերակառուցման եւ զարգացման Եվրոպական բանկի (EBRD) եւ միջազգային զարգացման այլ բանկերի, հայաստանյան եւ արտասահմանյան ձեռնարկությունների, կառավարության եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ովքեր կներկայացնեն ու կքննարկեն մասնավոր ոլորտում ազնիվ կորպորատիվ համակարգի ամրապնդմանը խթանող հակակոռուպցիոն միջոցառումները:

Համաժողովը տեղի կունենա 2010թ. մարտի 24-ին` չորեքշաբթի օրը, ժամը 10:00-ին Երեւանի «Անի Պլազա» հյուրանոցի «Անի» խորհրդակցությունների սրահում (գրանցումն սկսվում է 9:30-ին):

Մասնակիցները պետք է հաստատեն իրենց մասնակցությունը` կապվելով տկն. Քրիստինե Գրիգորյանի հետ **kgrigoryan@casals.com** փոստային հասցեով կամ գրանցվելով հետեւյալ կայքէջում **http://www.maac.am/:**

---

Ձեւ 1

**«Պրոմեթեյ-Գիտություն» Բարեգործական հիմնադրամի**
**2009թ. համառոտ**
**ՀԱՇՎԵԿՇԻՌԸ**

հազ. դրամ

| N/N | | Տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին |
|---|---|---|---|---|
| | ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| I | Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| II | Ընթացիկ ակտիվներ | | | |
| | Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 117 | 318 |
| | Այլ դեբիտորական պարտքեր | 180 | - | - |
| | Դրամական միջոցներ | 200 | 9 | 10684 |
| | Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում` | 210 | 363 | 302 |
| | Սոց.վճար | | | |
| | Գալիք ժամանակաշր. ծախսեր | 211 | 214 | 302 |
| | | 212 | 140 | |
| | Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 489 | 11304 |
| | ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 489 | 11304 |
| | ՊԱՍԻՎՆԵՐ | | | |
| III | Սեփական կապիտալ | | | |
| IV | Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| | Ակտիվներին վերաբերող շնորհներ | | | |
| V | Ընթացիկ պարտավորություններ | | | |
| | Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | - | |
| | Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 489 | - |
| | Եկամուտներին վերաբերող շնորհներ | 460 | - | 11304 |
| | Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 489 | 11304 |
| | ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 489 | 11304 |

Ձեւ 2

**«Պրոմեթեյ-Գիտություն» Բարեգործական հիմնադրամի**
**Ֆինանսական արդյունքների մասին 2009թ. համառոտ**
**ՀԱՇՎԵԿՇԻՌԸ**

հազ. դրամ

| N/N | Ցուցանիշիանվանումը | Տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին |
|---|---|---|---|---|
| | Վարչական ծախսեր | 050 | (8291) | (8441) |
| | Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում` | 070 | 12169 | 8696 |
| | Եկամուտներին վերաբերվող շնոհներ | 071 | 12111 | 8696 |
| | Բանկային % | 072 | 58 | |
| | Գործառնական այլ ծախսեր, այդ թվում` | 080 | (3878) | (1790) |
| | Անհատույց ստացված եկամուտներից ծախսեր | 081 | | (1790) |
| | Գործառնական շահույթ (վնաս) | 090 | | (1535) |
| | Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում` | 130 | | 1535 |

Ձեւ 4

**«Պրոմեթեյ-Գիտություն» Բարեգործական հիմնադրամի**
**2009թ. դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ**
**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

հազ.դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին |
|---|---|---|---|
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | 010 | 1674 | 9 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | | |
| Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում | 030 | 10000 | 20000 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր | 040 | 10000 | 20000 |
| Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից | 070 | 5380 | 6394 |
| Վճարումներ բյուջեին | 080 | 855 | 1055 |
| Վճարումներ սոցիալական ապահովության հիմնադրամին | 090 | 981 | 1149 |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում` | 100 | 4507 | 2262 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր | 110 | 11723 | 10860 |
| Գործարնական գործունեությունից դրամական ռիջոցներ զուտ հոսքեր | 120 | (1723) | 9140 |
| Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում` | 250 | 59 | 1868 |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր | 260 | 59 | |
| Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում | 290 | 1 | 333 |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր | 300 | 1 | 333 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 310 | 58 | |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 320 | (1665) | 1535 |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | 350 | 9 | 10684 |

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Պրոմեթեյ-Գիտություն» Բարեգործական Հիմնադրամի**
**2009թ. կատարված ծրագրերի մասին**

հազ. դրամ

| N | Ծրագրերի հոդվածների անվանումը | Ծախսված միջոցները |
|---|---|---|
| 1 | 2009թ. ֆինանսական տարում իրականացված ծրագրերը, այդ թվում | 1790 |
| | - հատկացումներ ԲՈՒՀ-երին օգնության կարգով | |
| | - գիտական գրականության հրատարակման հովանավորում | |
| | - հատկացումներ օգնության կարգով անապահով ուսանողներին ուսման վարձը վճարելու համար | 1790 |

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Պրոմեթեյ-Գիտություն» Բարեգործական Հիմնադրամի**
**2009թ. ֆինանսական աղբյուրների մասին**

հազ. դրամ

| N | Ֆինանսական աղբյուրները | Ստացված միջոցները | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 1 | 2009թ. հունվարի 1-ի դրությամբ չօգտագործված միջոցների մնացորդ | 9 | |
| | 2009թ. ընթացքում ստացված եկամուտներին վերաբերվող շնորհները | 20000 | |
| 3 | Բանկային տոկոս | 1535 | |
| | Ընդամենը ստացված | 201535 | |
| 4 | Ընդամենը 2009թ. ծախսված միջոցներ | 10860 | |
| | որից վարչակառավարչական ծախսեր | 8441 | |
| | Միջոցների մնացորդը առ. 01.01.2010թ. | 10684 | |

Հիմնադրամի տնօրեն Գ. Գեւորգյան
Հիմնադրամի գլխ. հաշվապահ Եվ. Հարությունյան

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները ճշմարտացիորեն են արտացոլում հիմնադրամի ֆինանսական ֆիճակը եւ գործունեության արդյունքները 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

16 մարտի 2010 թ.

Տնօրեն
Որակավորված աուդիտոր
[illegible] Ավետյան

---

### Հայտարարություն

Սույն թվականի մարտի 24-ին, ժամը 12.00-ին **«Գեոթիմ» ՓԲԸ** «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը կազմակերպում են հասարակական լսումներ ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի տարածքում իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-15-68:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 18.03.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: